ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 31 (1531) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 3, 2011
VOLUME 31, NO. 31 (1531) SATURDAY, SEPTEMBER 3, 2011
Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի
MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

# ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌՕՐԵԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐՈՒ ԱՌԱՋ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ***

Մեր Օգոստոս 20, 2011 թ. համարով գրեցինք, թէ իբրեւ ազգ եւ հայրենիք, մեր ժողովուրդի գոյութեան պահպանման անփոխարինելի կառոյցները կը հանդիսանան մեր ոսկեղնիկ լեզուն, Մեսրոպատառ գիրն ու գրականութիւնը, մշակութային արժէքներն ու սերունդէ սերունդ մեզի փոխանցուած մեր ազգային աւանդութիւնները: Նաեւ, արագ նշում մը կատարեցինք նոր ժամանակներու զուգահեռ յառաջ քշուող ազգային նորարար մտածելակերպերու վրայ, «Մասիս»ի յաջորդ համարներուն վերապահելով անոնց մասին մեր ունեցած մտորումներ:

Ընկերային շրջանակներէ ներս, երբեմն հրապարակաւ՝ արտայայտութիւն կը գտնեն ելոյթներ, որոնք ընդվզում կը յառաջացնեն ժողովրդական նաեւ միութենական խաւերէ ներս: Այդպիսի ընդվզեցուցիչ վիճակի մը մէջ գտնուեցանք նաեւ մենք, երբ առիթով մը, յատուկ հրաւէրով, ներկայ գտնուեցանք նման հրապարակային հաւաքի մը, ուր զեկոյցով մը հանդէս պիտի գար բարեսիրական միութեան մը պատասխանատու վարիչներն մին:

Հոն սկսան արծարծուիլ գաղափարներ որոնք կ'ընդգրկէին սփիւռքահայ գաղթօճախներէ ներս տիրող լեզուական, մշակութային, կենցաղային ու նման այժմէական հարցեր: Հասակ առնող արդի սերունդներու մօտ կը շեշտուէր հայերէն լեզուի անգիտութիւնը: Անոնք՝ ընդհանրապէս հայերէն չէին խօսեր, չէին գիտեր գրել եւ կարդալ: Ծանօթ չէին մեր մշակութային պերճափայլ եւ հպարտացուցիչ հարուստ խիզախումներուն, մեր պատմութեան: Բայց անոնք հոգեպէս ուժեղ, խորը ազգասէր եւ հայրենասէր հայեր էին: Նուիրուած էին հայ ժողովուրդի դարաւոր պահանջատիրութեան եւ ազատագրական պայքարին:

Այս նկատառումները կը կատարուէին ցոյց տալու համար, թէ հայերէն լեզուն հրամայական անհրաժեշտութիւն մը չէր հայը հայ պահելու եւ ազգային առաջադրանքները ի գործ ածելու համար: Նաեւ, ան կուզար պատգամելու՝ թէ պէտք էր վերանայիլ մեր ազգային դասական ըմբռնումներուն: Այդ ըմբռնումները, բացառաբար հայերէն լեզուի իմացումով կը պայմանաւորէին հայ մարդու հայ ըլլալը եւ հայապահպանութեան պայքարի յաջողութիւնը տարաշ-

*Տար.ը էջ 18*

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան, «Կարէն Դէմիրճեանի» անուան մարզահամերգային համալիրին մէջ Օգոստոս 30-ին տեղի ունեցած Արտաքին գործոց նախարարութեան կեդրոնական աշխատակազմի եւ արտերկրի մէջ ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւններու ղեկավարներու խորհրդակցութեան ժամանակ, դարձեալ պաշտպանած է հայ-թրքական արձանագրութիւններու կապակցութեամբ Հայաստանի իշխանութիւններու վարած քաղաքականութիւնը, յայտարարելով որ յարաբերութիւններու կարգաւորման նախաձեռնութիւնը բարձրացուց Հայաստանի միջազգային հեղինակութիւնը եւ ցրուեց նոր ու ժամանակակից Թուրքիոյ մասին պատրանքները:*

*«Շատերին կարող է թուալ, թէ մենք պէտք է ափսոսանք Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները կարգաւորելու նախաձեռնութիւն դրսեւորելու համար, քանի որ Թուրքիան հրաժարուեց իր պարտաւորութիւններից, իսկ մենք հսկայական քաղաքական քափիթալ ծախսեցինք: Կարծում եմ՝ այս լսարանում ներկաները հասկանում են, որ այդ նախաձեռնութիւնը բարձրացրեց Հայաստանի միջազգային հեղինակութիւնը եւ ցրեց նոր ու*

*Տար.ը էջ 4*

# ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ «ԼՈՒՐՋ ՄԻՋՈՑՆԵՐ» Կ'ԱԿՆԿԱԼԷ ԻՐ ՈՒՆԵՑՈՒԱԾՔԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՈՐՈՇՈՒՄԷՆ



***Թուրքիոյ վարչապետ Ռեճեպ Էրտողան եւ փոքրամասնութիւններու հոգեւոր առաջնորդները ճաշկերոյթի ընթացքին***

*Թուրքիոյ կառավարութիւնը որոշում ընդունած է ազգային փոքրամասնութիւններուն վերադարձնել 1936-ին յայտարարագրուած, այնուհետեւ անոնցմէ բռնագրաւուած ունեցուածքը:*

*«Ազատութիւն» ռատիոկայանի հաղորդմամբ, հրամանագիրի հրապարակումէն ետք՝ Կիրակի օր, Թուրքիոյ վարչապետ Ռեճեպ Թայիփ Էրտողան հանդիպում ունեցած է ազգային փոքրամասնութիւններու ներկայացուցիչներուն հետ, Ռամատանի տօնակատարութեան աւարտին հրաւիրուած ծոմապահութեան ընթրիքի՝ «Իֆթարի» արարողութեան ժամանակ:*

*Հանդիպման մասնակցած Սթամպուլի «Ժամանակ» թերթի գլխաւոր խմբագիր Արա Գոչունեանի փոխանցմամբ, գլխաւոր սեղանին շուրջ՝ Էրտողանի կողքին, նստած եղած են Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդ Արամ Աթէշեանը եւ «Սուրբ Փրկիչ» հայկական հիւանդանոցի հոգաբարձուներու խորհուրդի նախագահ Պետրոս Շիրինօղլուն:*

*Թրքական «Զաման» թերթը հրապարակած է այն շինութիւններու ցանկը, որոնք պիտի վերադարձուին հայերուն: Անոնց մէջ են Կիւլպենկեան Սելամեթ Հանրային տունը, «Կետիկփաշայ» հայկական բողոքական դպրոցը, այդ դպրոցին պատկանող քանի մը շինութիւններ՝ ճաշարանը, խաղահրապարակը, ինչպէս նաեւ «Սուրբ Փրկիչ» հայկական հիւանդանոցին պատկանող տարբեր շի-*

*Տար.ը էջ 5*

# ՈՒԻՔԻԼԻՔՍ. «ԴԺՈՒԱՐ ԹԷ ԲԱՑԱՅԱՅՏՈՒԻ ՄԱՐՏԻ 1-Ի ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ»



***Երեւանի մէջ տեղի ունեցած սպանդին մասնակցած զօրքը. Մարտ 2, 2008.***

*«Ուիքիլիքս» ինթըրնէթային կայքէջին կողմէ Օգոստոս 26-ին գաղտնազերծուած՝ Հայաստանին վերաբերող շուրջ 1000 դիւանագիտական փաստաթուղթերու շարքին էր նաեւ Երեւանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանութեան 2008 թուականի Ապրիլ 9-ին պատրաստուած տեղեկագիրը, ուր դեսպանատան գործերու հաւատարմատար՝ Ջոզէֆ Փենինկթըն կ'ամփոփէ Մարտի 1-ի իրադարձութիւններուն յաջորդած զարգացումները:*

*Ամերիկացի դիւանագէտը, Ուաշինկթըն ուղարկուած գրութեան մէջ կ'արձանագրէ Մարտի 1-ի իրադարձութիւններու վերաբերեալ ճշգրիտ տեղեկատուութիւն ստանալու դժուարութիւնը:*

*«Ամբողջական, հրապարակային տեղեկատուութեան բացակայութիւնը կը նպաստէ որոշ լուրերու տարածման, որոնց համաձայն զոհերու թիւը շատ աւելի մեծ է, իսկ կառավարութիւնը կը փորձէ թաքցնել փաստերը: Լայնօրէն տարածուած խօսակցութիւններէն մէկի համաձայն, կառավարութիւնը մարդոց սպանութիւնները նախապէս ծրագրած է՝ հետագային արտակարգ դրութիւն մտցնելու, ընդդիմութիւնը ճնշելու, ընդդիմութեան առաջնորդներուն, նախ-*

*Տար.ը էջ 4*

# ԳԵՆԵՐԱԼ ՄԱՆՈՒԷԼԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

Տաղկաձորում երիտասարդ գիտնականների հետ հանդիպման ժամանակ, Սերժ Սարգսեանը արձագանքելով գիտնականներից մէկի խօսքին, թէ «հերոսի կերպարը ո՞վ պէտք է լինի, ո՞ւմ պէտք է հետեւի Հայաստանի երիտասարդութիւնը՝ Մանուէլնե՞րը.., ասել է.

«Շատ ներողութիւն, սխալ արտայայտութիւն մի արէք, Դուք Մանուէլին ճանաչում էք: Ձեր պրոբլեմը գալիս է նրանից, որ դուք ղեկավարւում էք ինչ-որ դեղին մտքերով, դեղին մամուլով: Մանուէլն այն հայ մարդն է, որի անձնազոհութեան շնորհիւ մենք շատ բաների ենք կարողացել հասնել, եւ այն հեքիաթները, որ պատմում են, սխալ է: Մենք այսօր ունենք Մանուէլի տղայ, որը Էջմիածնի քաղաքապետն է: Մենք պարբերաբար ուսումնասիրութիւններ ենք իրականացնում, եւ արդէն տեւական ժամանակ է Էջմիածնի քաղաքապետը ամենաբարձր վարկանիշ ունեցող քաղաքապետերից մէկն է: Ես չեմ ասում Մանուէլը որեւէ թերութիւն չունի, բայց փորձե՞լ էք համեմատել այդ թերութիւններն ու առաւելութիւնները, բա ո՞ւր էին ձեր ասած էդ լաւ տղաները, որ պէտք է գնային այնտեղ եւ անհրաժեշտութեան պահին կեանք տային, որ հիմա Մանուէլի մասին գրոտում են»:

Շատ հետաքրքիր է, Սերժ Սարգսեանը, ով երիտասարդ գիտնականների ակնարկից պաշտպանում է պաշտօնաթող գեներալ Մանուէլ Գրիգորեանին, արդեօք փորձում էր օրինակ նոյն բանն անել երկրի վարչապետի եւ արդէն պաշտօնապէս ընտրուած նախագահի կարգավիճակում, երբ 2008 թուականի փետրուարի յայտնի իրադարձութիւնների ժամանակ Ռոբերտ Քոչարեանը Լեւոն Տէր-Պետրոսեանին լոյալ լինելու համար Մանուէլին հեռացնում էր պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալի պաշտօնից: Արդեօք Սերժ Սարգսեանը փորձել է այդ ժամանակ պահել գեներալ Մանուէլին, Ռոբերտ Քոչարեանին յիշեցնել նրա վաստակները:

Թէ՝ այն ժամանակ պահելու աւելի կարեւոր բան կար՝ իշխանութիւնը, ինչին Մանուէլը չէր նպաստում, ու մէկ էլ տեսար կարող էր խանգարել, եւ դրա համար կարիք չկար յիշել նրա հերոսական վաստակը: Իսկ հիմա իշխանութեան հարցը լուծուել է կամ լուծւում է, այդ թւում գուցէ նաեւ Մանուէլի օժանդակութեամբ, հետեւաբար նա հերոս է:

Իհարկէ, 2008 թուականի փետրուարին Մանուէլից ձերբազատուելու ձեւակերպումն այն էր, որ նա չի ենթարկուել Գերագոյն գլխաւոր հրամանատարին: Դա իհարկէ չափազանց ծանրակշիռ պատճառ է, որպէսզի սպային հեռացնեն պաշտօնից: Աւելին, դրա համար նոյնիսկ պէտք է պատժել սպային: Բայց հետաքրքիր է նաեւ, թէ Գերագոյն գլխաւոր հրամանատարի որ, ինչ հրամանին չի ենթարկուել Մանուէլը: Ինչ էր նրան յանձնարարուել, հրամայուել կամ պահանջուել, որ նա հրաժարուել է կատարելուց կամ հետեւելուց:

Այդ առումով, իշխանութիւնը հանրութեանը կարծես թէ այդպէս էլ չներկայացրեց Մանուէլին հեռացնելու յստակ պատճառը, կոնկրետ ձեւակերպումով:

Բայց այդ ամէնն իհարկէ իմիջայլոց, քանի որ թէ անցած գնացած բան է, եւ թէ ինչ որ առումով նոյնիսկ դրական է, որ թէկուզ քաղաքական շարժառիթով, թէկուզ իշխանութեան համար պայքարում, բայց Մանուէլի որակի հրամանատարը հեռացուեց հայկական բանակից: Մեղմ ասած ոչ միշտ է, որ պատերազմական որակները արդիւնաւէտ են բանակաշինութեան գործում, առաւել եւս, որ բանակը խնդիր ունի լինել 21-րդ դարին համապատասխան, խնդիր ունի զարգանալ փողառատ Ատրպէյճանի համեմատ, ինչը նշանակում է զարգանալ եւ Ատրպէյճանին գերազանցել բանակային որակներով, արդիական մտածողութեամբ եւ արժէքներով, սպայ-զինուոր, սպայ-սպայ, սպայ-հասարակութիւն յարաբերութեան որակներով:

Հայաստանը փոքր երկիր է, եւ եթէ Սերժ Սարգսեանն ուսումնասիրել է ու պարզել, որ Մանուէլի տղան Հայաստանի ամենավարկանիշային քաղաքապետներից է, ապա թերեւս դժուար չէր լինի ուսումնասիրել ու պարզել, թէ արդեօք ճիշտ է կոնկրետ դէպքերի եւ օրինակների մասին պատմութիւնների հիման վրայ ձեւաւորուած հանրային այն համոզումը, որ ասենք Արմաւիրի մարզի մի զգալի մասում Հայաստանի Սահմանադրութեան փոխարէն իշխում է գեներալ Մանուէլի եւ նրա որդիների խօսքը, ու եթէ Սահմանադրութիւնը հակասում է այդ խօսքին, ապա փակւում եւ դրւում է մի կողմ: Չէ որ հենց միայն այդ հանգամանքը կարող է պատճառ դառնալ, որ ասենք Էջմիածինցիները ցանկացած հարցման ժամանակ հիացմունք արտայայտեն Մանուէլի որդու քաղաքապետութեամբ, մտավախութիւն ունենալով, որ հակառակ դէպքում կարող են պատասխան տալ «մանուէլադրութեան» առաջ՝ ինչ իմանաս, թէ ով է հարցնողը եւ ինչ նպատակով է վարկանիշ պարզում:

Մանուէլը գուցէ շատ անձնուէր ու հերոս ազատամարտիկ է եղել, իր հսկայական լուման է ներդրել Ղարաբաղի պատերազմի յաղթանակի համար: Բայց մի բան է պատերազմը, մէկ այլ բան խաղաղ ժամանակաշրջանը թէ բանակում, թէ քաղաքացիական կեանքում: Եւ եթէ մարդը պատերազմին հերոսացել է, դա դեռ չի նշանակում, որ նրա քաղաքացիական կեանքն անքննելի է: Մինչդեռ Մանուէլը քաղաքացիական կեանքը շարունակել է գրեթէ անքննելի վարքով, սկսած հենց հրադադարից անմիջապէս յետոյ ընկած ժամանակահատուածից:

Չէ որ որեւէ մէկի համար գաղտնիք չէ, որ գեներալն այսօր Հայաստանի մեծահարուստներից մէկն է, ու բնականաբար հարց է առաջանում, թէ ինչպէս է ձեռք բերուել այդ հարստութիւնը, ինչպէս է հերոս գեներալը դարձել յաջողակ բիզնեսմեն կամ խոշոր սեփականատէր: Եթէ դրանք պատերազմի դափնիներն են, ապա հարց է առաջանում, թէ ով եւ ինչ չափով է չափել վաստակը, ինչու պատերազմի մասնակիցներից ոմանք դարձել են գերհարուստ, իսկ ոմանք էլ այսօր չունեն առողջութիւնը վերականգնելու, սնուելու եւ իրենց զաւակներին ու ընտանիքները սնելու փող: Ով է որոշել, ինչ սկզբունքով, եւ եւ ինչ չափով է չափել հերոսութիւնը:

Իսկ գուցէ ոչ թէ հերոսութիւնն է չափուել ու չափւում, այլ չափուել ու չափւում է նուիրուածութիւնը քաղաքական իշխանութեանը: Աւելի ճիշտ՝ քաղաքական շահին, որովհետեւ, օրինակ, ընդդիմութեան պարագայում էլ, երբ Մանուէլը լոյալ էր ու պատրաստ էր աջակցել, նա օրուայ հերոսն էր, իսկ երբ հետ կանգնեց կամ չտրուեց «գայթակղութեանը», նա դարձաւ «աւազակապետութեան» անքակտելի մասնիկ:

Այդպիսին է Հայաստանը, ու դա գուցէ օբիեկտիւ իրողութիւնն է, ու նաեւ հենց դրա համար է Հայաստանում իրավիճակը պահանջում արժէքների, հասկացութիւնների, մտածողութեան արմատական վերանայում, քանի որ իշխող արժէքներն ու մտածողութիւնն այնքան են քարացած, կարծրացած ու կամայ թէ ակամայ ներծծուած արատաւոր միթնոլորտով, որ թերապեւտիկ բուժման ենթակայ չեն: Աւելին, դրա ընթացքում բժիշկն էլ նոյնիսկ սկսում է վարակուել: Վիրահատական միջամտութիւնն այլընտրանք չունի, ու Հայաստանում հարցն այն է, թէ ով ունի Հայաստանը վիրահատութեան ենթարկելու միտք եւ կամք: Կարեւոր չէ՝ իշխանութեան մէջ է այդ մարդը, ընդդիմութեան մէջ, թէ խրամատում, ընդհատակում, գրասենեակում:

Հայաստանին պահանջւում է շտապ վիրահատութիւն: Երկիրն ու նրա մարդիկ բոլորն էլ գուցէ իսկապէս շատ քաղցր են, բայց իրավիճակը շատ յիշեցնում է մուրաբայի, որում սկսել է շաքարակալման արագ ընթացք, եւ մուրաբան արդէն գործածութեան պիտանի չէ:

«ԼՐԱԳԻՐ»

# ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ ՉԻ ԽԱԽՏՈՒԵԼ

*ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ*

Հէնչ լաւ բան չստացուեց. կոնգրէս-իշխանութիւններ երկխօսութիւնն ընդհատուեց ամենահետաքրքիր փուլում՝ ճիշդ այն պահին, երբ կողմերը ուր որ է պիտի սկսէին քննարկել արտահերթ ընտրութիւնների անցկացման հարցը: Պատճառը յայտնի է. իշխանութիւնները հրաժարուեցին ազատ արձակել Կոնգրէսի ակտիւիստներից մէկին, թէեւ իշխանական պատուիրակութիւնը վստահութիւն էր յայտնել, որ օրէնքը բոլորի նկատմամբ գործելու է «ոչ խտրական»:

Ի դէպ, Հայաստանի բարձրաստիճան պաշտօնեաների եւ օլիգարխների զաւակները ժամանակ առ ժամանակ զանազան ռեստորանների պատուհաններից մարդկանց դուրս են շպրտում եւ այդպիսով կարգին զուարճանում, բայց խնդիրը դա չէ: Ի վերջոյ, եթէ բոլոր նրանք, ովքեր խախտել են քրէական օրէնսգիրքը, կալանաւորուէին, ապա Ազգային ժողովը երբեք քւորում չէր ունենայ, իսկ կառավարութիւնն իր նիստերը կ՚անցկացնէր «Կոշ» քրէակատարողական հիմնարկում: Խնդիրն այն է, որ իշխանութիւնները բոլոր հնարաւորութիւններն ունէին ազատ արձակելու Կոնգրէսի ակտիւիստին, բայց չգնացին այդ քայլին՝ շատ լաւ գիտակցելով, որ այդ դէպքում բանակցութիւններն ընդհատուելու են: Հետեւաբար, տուեալ դէպքում կարեւորագոյն հարցը հետեւեալն է՝ ինչո՞ւ իշխանութիւնները դիմեցին նման քայլի:

Այստեղ հնարաւոր է երկու տարբերակ: Առաջինը պայմանականօրէն անուանենք «Շուրա Բալագանովի սինդրոմ»: Յիշո՞ւմ էք, թէ ինչպէս է Շուրա Բալագանովը, գրպանում ունենալով 50 հազար ռուբլի, սովորութեան համաձայն ինչ-որ մէկի պայուսակից մի քանի ռուբլի գողանում ու յետոյ գոռում «կամանդոր, ես ակամայ...»: Ճիշդ այդպէս էլ ոստիկանները, սովորութեան համաձայն, յարձակուել են Կոնգրէսի ակտիւիստների վրայ, այսինքն՝ գործել է նրանց պայմանական ռեֆլեքսը: Բայց այս տարբերակը քիչ հաւանական է, որովհետեւ այդ դէպքում իշխանութիւնները մի քանի օր անց ազատ կ՚արձակէին բոլորին, ու միջադէպը կը հարթուէր: Իսկ երկրորդ տարբերակը պայմանականօրէն կարելի է անուանել «հայի յետին խելք»: Ընդդիմութեան հետ բանակցութիւններ սկսելով՝ իշխանութիւնները յոյս են ունեցել, թէ արդիւնքում ընդդիմութեան դիրքերը կը թուլանան, բայց յետոյ հասկացել են, որ արդիւնքում իրենց դիրքերն են թուլանում, եւ իրենք արդէն փաստացի արտահերթ ընտրութիւնների հարցն են քննարկում: Ուշացումով սթափուելով նրանք ստիպուած են եղել դիմել այնպիսի քայլի, որը հաստատ կը կասեցնէր բանակցութիւնները: Եւ նրանք փաստօրէն հասել են իրենց նպատակին: Այս փաստն, ի դէպ, լաւագոյն պատասխանն է բոլոր այն «ընդդիմադիր ուժերին», ովքեր ամիսներ շարունակ պնդում էին, թէ երկխօսութիւնը ձեռնտու է միայն իշխանութիւններին: Եթէ այդպէս էր, ինչո՞ւ հենց նրանք էլ ամէն ինչ

Շար.ը էջ 18

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՁԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $120.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ԻԳԻԹԵԱՆ,-«ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՈԽՈՒԻ»



ՀՀՇ վարչութեան անդամ Յովհաննէս Իգիթեան

*ՀՀՇ վարչութեան անդամ Յովհաննէս Իգիթեանը «Հայելի» ակումբում հրաւիրուած ասուլիսում ենթադրութիւն է յայտնել, որ իշխանութեան մէջ կան մարդիկ, ովքեր մտածում են, որ ՀԱԿ-իշխանութիւն երկխօսութեան հետեւանքով կարող են պաշտօն կորցնել:*

*-Եւ իրո՞ք այդպէս կը լինի: Ու նրանք օգտագործում են բոլոր հանգամանքներն այս երկխօսութիւնը տապալելու համար,-ասել է Հ. Իգիթեանը:*

*Նա հրաժարուել է կոնկրետ մարդկանց անուններ նշել, բայց մանրամասնել է, որ խօսքը ոստիկանական համակարգի 90%-ի, Ազգային ժողովի 70%-ի մասին է, իսկ եթէ երկխօսութեան հետեւանքով ստեղծուի Հայաստանում գործող մոդելը, ապա կառավարութիւնը հաստատ կը փոխուի:*

*«Հետեւաբար, քանի որ Սերժ Սարգսեանը գնում է ՀԱԿ-ի հետ երկխօսութեան, նշանակում է՝ իւրայինների դէ՞մ է գնացել» «7օր»-ի հարցին Հ. Իգիթեանը պատասխանել է.*

*-Սերժ Սարգսեանը 2 խնդիր ունի՝ մի կողմից ձեր ասած իւրայիններին պահելու եւ մնելու, որ միւս ընտրութիւնների ժամանակ իրեն օգնեն, բայց միւս կողմից ինքն իրեն ՀՀ նախագահ է համարում: Ի վերջոյ, այստեղից բխում է որոշ պատասխանատուութիւն, եւ ինքը դա պէտք է կատարի, չէ՞, ժողովրդի, պետութեան հանդէպ, արտաքին քաղաքականութեան: Ինքը պէտք է նայի՝ որն է իր համար աւելի կարեւոր:*

## ԿՈԱԼԻՑԻԱՆ ՍԿՍԵԼ Է ՉՀԱՒԱՏԱԼ ԿՈՆԳՐԷՍԻՆ

*Հայ ազգային կոնգրէսի հետ երկխօսութիւնում քաղաքական կոալիցիան ներկայացնող աշխատանքային խումբը տարածել է հաղորդագրութիւն, որում նշւում է.*

*«Ցաւով ծանօթացանք երկխօսութեան ընթացքի վերաբերեալ Հայ ազգային կոնգրէսի յայտարարութեանը. ցաւով, որովհետեւ այն նախ եւ առաջ հարուածեց՝ մինչ օրս համատեղ աշխատանքի ընթացքում մեր գործընկերների հանդէպ ձեւաւորուած վստահութեանը. մի բան, որ իրապէս ձեռքբերում էինք համարում: Մենք ցաւում ենք ոչ այնքան նրա համար, որ դուք ստում էք, այլ նրա համար, որ մենք սկսել ենք ձեզ չհաւատալ:*

*Մենք՝ քաղաքական կոալիցիան ներկայացնող աշխատանքային խմբի անդամներս, չենք առաջնորդուի ՀԱԿ-ի որդեգրած գործելաոճով եւ ՀԱԿ պատուիրակութեանը չենք վերագրի յօրինուած պարտաւորութիւններ: Իսկ ակնյայտ ստին կը պատասխանենք ընդամէնը մէջբերում անելով Օգոստոսի 23-ի հանդիպումից անմիջապէս յետոյ մեր աշխատանքային խմբի ղեկավարի խօսքից. «Ի պատասխան հարցին՝ արդեօք աշխատանքային խումբը խոստացե՞լ է, որ Տիգրան Առաքելեանն ազատ կ՛արձակուի, պարոն Յարութիւնեանն ասաց. «Ես արդէն ասացի՝ մենք իրաւական պրոցէսին ամենեւին չենք ներգրաւում, ընթանում է քաղաքական գործընթաց, մենք ընդամէնը դիտարկել ենք, թէ ինչ է տեղի ունենում մեր իրաւական համակարգում, եւ վստահութիւն ենք յայտնել, որ այն ինչպէս գործել է, այդպէս էլ շարունակելու է գործել՝ բոլորի նկատմամբ ոչ խտրական» /«Առաւօտ», 24.08.2011թ./: Սա հենց այն դէպքն է, երբ մեկնաբանութիւնները պարզապէս աւելորդ են:*

*Ինչպէս նախորդ հանդիպումների ժամանակ, այսօր եւս կրկնում ենք նոյնը. միջադէպին մասնակցած երիտասարդի հարցը մենք չենք կապել, չենք կապում եւ չենք էլ կապելու այս կարեւոր քաղաքական գործընթացի հետ, քանզի այն ամբողջովին իրաւական հարթութիւնում է:*

*Մենք, ինչպէս միշտ, պատրաստ ենք աշխատել մեր երկրում առկայ ու մեր ժողովրդին յուզող խնդիրների լուծման ուղղութեամբ եւ շարունակում ենք բաց լինել ցանկացած կառուցողական առաջարկութեան շուրջ երկխօսութեան համար: Յոյս ունենք, որ մեր գործընկերները կը կարողանան վեր կանգնել այս պահային գայթակղութիւններից, եւ մենք հնարաւորինս շուտ կը կարողանանք շարունակել մեր երկրի համար կարեւոր քաղաքական գործընթացը»:*

## ՁԵՐԲԱԿԱԼՈՒԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԵՏ ՄԱՐԳԱՐ ՕՀԱՆԵԱՆԸ

*Հայաստանի յատուկ քննչական ծառայութեան վարոյթում քննուող քրէական գործով պաշտօնական դիրքը չարաշահելու եւ գոյքի առանձնապէս խոշոր չափերով յափշտակութիւն կատարելու կասկածանքով Օգոստոսի 30-ին ձերբակալուել է Հայաստանի ոստիկանութեան «Ճանապարհային ոստիկանութեան» ծառայութեան պետ, ոստիկանութեան գնդապետ Մարգար Օհանեանը:*

*Օրերս ձերբակալուել էր նրա մտերիմներից մէկը՝ ճանապարհային ոստիկանութեան 2-րդ սպայական գումարտակի հրամանատար, գնդապետ Ստեփան Կարախանեանը: Նա, չարաշահելով պաշտօնական լիազօրութիւնները, Հայաստանի մարզերում ոստիկանութեան աշխատանքները կազմակերպելու համար իր ենթակայութեան տակ գտնուող առանձին վաշտերին հասանելիք եւ իրեն վստահուած շուրջ 277 հազար լիտր բենզինից ըստ նպատակի յատկացրել է 121 հազար լիտրը, իսկ տարբերութիւնը՝ իւրացրել:*

*Դրանից յետոյ մամուլում լուրեր էին շրջանառւում, որ այս գործով ձերբակալուելու է նաեւ Մարգար Օհանեանը:*

## «ՀՀ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԽԱԽՏԵԼ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ»

*Գիտութեան եւ կրթութեան նախարարութիւնը հանրակրթական դպրոցի դասագրքերի մրցոյթի ընթացքում խախտել է մաթեմատիկայի դասագրքի հեղինակի իրաւունքը, քանի որ մրցոյթին ներկայացուել եւ յաղթող է ճանաչուել մրցութային յանձնաժողովի անդամի գիրքը, ասուած է Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպանի գրասենեակի Տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի բաժնի՝ այսօր տարածած հաղորդագրութիւնում:*

*«Շահագրգիռ անձի ներգրաւումը մրցոյթային յանձնաժողովում անհաւասար պայմաններ է ստեղծել մրցոյթի մասնակիցների միջեւ», - ասուած է հաղորդագրութիւնում: - «Բողոքի հիման վրայ կատարուած ուսումնասիրութեան ընթացքում ՀՀ գիտութեան եւ կրթութեան նախարարութիւնն ընդունել է, որ հանրակրթական դպրոցների դասագրքերի մրցոյթների կազմակերպման եւ անցկացման իրաւական հիմքերը, այդ թւում շահերի բախումը բացառելու երաշխիքները, ներկայումս յստակ կանոնակարգուած չեն»:*

*Մարդու իրաւունքների պաշտպանն առաջարկում է Գիտութեան եւ կրթութեան նախարարութեանը մշակել եւ օրէնքով ամրագրել համապատասխան ընթացակարգեր, որոնք կը վերացնեն եւ կը բացառեն կոռուպցիոն ռիսկերը նշուած գործընթացներում: Միեւնոյն ժամանակ, առաջարկւում է անվաւեր ճանաչել արդէն իսկ անցկացուած մրցոյթի արդիւնքները՝ մարդու խախտուած իրաւունքը վերականգնելու եւ նրա համար մրցոյթային հաւասար պայմաններ ապահովելու նպատակով:*

## ՊԵՏԱԿԱՆ ԲԻՒՋԷԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

*2011 թուականի Յունուար-Յուլիս ամիսներին ՀՀ պետական բիւջէի եկամուտները կազմել են շուրջ 482.2 մլրդ դրամ (մօտ 1.3 մլրդ դոլար), իսկ ծախսերը՝ 492.7 մլրդ դրամ (մօտ 1.33 մլրդ դոլար): Այդ մասին NEWS.am-ին յայտնեցին ֆինանսների նախարարութիւնից:*

*Նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ պետական բիւջէի եկամուտներն աճել են 9.9%-ով կամ շուրջ 43.4 մլրդ դրամով (մօտ 117 մլն դոլար), որն ապահովուել է հարկերի ու տուրքերի, պարտադիր սոցիալական ապահովութեան վճարների եւ պաշտօնական դրամաշնորհների հաշուին: Պետական բիւջէի եկամուտների 92.3%-ը ձեւաւորուել է հարկային եկամուտների, պետական տուրքերի եւ պարտադիր սոցիալական ապահովութեան վճարների, 5.2%-ը՝ այլ եկամուտների, 2.5%-ը՝ պաշտօնական դրամաշնորհների հաշուին:*

*2011 թուականի Յունուար-Յուլիս ամիսների ընթացքում ՀՀ պետական բիւջէ են մուտքագրուել 373.4 մլրդ դրամ (մօտ 1 մլրդ դոլար) հարկային եկամուտներ ու պետական տուրքեր: Հարկերի ու տուրքերի կատարողականի ցուցանիշի վրայ բացասական ազդեցութիւն է գործել արտաբիւջետային մուտքերի ցածր կատարողականը:*

*Հարկերի եւ տուրքերի 48.7%-ն ապահովուել է աւելացուած արժէքի հարկի հաշուին, 5.5%-ը՝ ակցիզային հարկի, 6.9%- ը՝ շահութահարկի, 12.1%-ը՝ եկամտահարկի, 5.7%-ը՝ մաքսատուրքի:*

## ՈՐՏԵՂԻ՞Ց ՆԱՊՈԼԵՈՆ ԱԶԻԶԵԱՆԻՆ 3 ՄԼՆ ԴՐԱՄ, 20 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ

*ԱԺ նախկին պատգամաւոր Նապոլեոն Ազիզեանը, ում տունը վերջերս թալանել էին, չի ցանկանում խօսել այս միջադէպի մասին: Դէպքից յետոյ NEWS.am-ը զանգահարեց նրան՝ մի շարք մանրամասներ ճշդելու, բայց նա չցանկացաւ խօսել՝ պատճառաբանելով, որ այժմ դրա ժամանակը չէ: «Յետոյ կը խօսենք, երբ մի շաբաթ անցնի, որ մի քիչ խելքի գամ, կը խօսենք»,- խնդրեց նախկին պատգամաւորը:*

*Մէկ շաբաթ անց՝ Օգոստոսի 29-ին, NEWS.am-ը նորից զանգահարեց նրան՝ զրուցելու, բայց Նապոլեոն Ազիզեանը այս անգամ էլ զրուցելու ցանկութիւն չունէր: Շատ քիչ հարցերի պատասխաններ յաջողուեց ստանալ:*

*Այսպէս՝ իր տունը թալանելու մէջ նա ոեւէ մէկին չի կասկածում, թշնամիներ էլ երբեւէ չի ունեցել. «Ես թշնամի չունեմ»,- ասաց Նապոլեոն Ազիզեանը: Ինչ վերաբերում է նրա բնակարանից գողացուած «հարուստ» աւարին եւ թէ որտեղից նախկին պատգամաւորին այդքան գումար, նա պատասխանեց. «Ես հօ չեմ դրել հաշուել՝ ինչ են տարել, ինչ չեն տարել, մօտաւորապէս հաշուել, գրել են»,- նշեց նա:*

*Նապոլեոն Ազիզեանը, կինը եւ նրա դուստրն այժմ իրենց լաւ են զգում. «Ես ոչ մի բանով զբաղուած չեմ, ես մեր տանն եմ, տանից մի քանի օր է՝ դուրս չեմ եկել, մի քիչ վատ եմ ինձ զգում: Ոչ մի բանով չեմ զբաղւում»,- ասաց նա՝ ի պատասխան հարցի, թէ ինչով է այժմ զբաղւում, եւ որպէս «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան անդամ պատրաստւո՞ւմ է արդեօք նախընտրական շրջանին:*

*Յիշեցնենք, որ Օգոստոսի 21-ին, ժամը 05.00-ին, դիմակաւորուած 5 անձինք, պատշգամբով մտել են ԱԺ նախկին պատգամաւոր Նապոլեոն Ազիզեանի՝ Կիլիկիա թաղամասի Սիսվանի փողոցի թիւ 57 տուն, ծեծի ենթարկել նրան, կնոջը եւ դստերը ու զէնքի սպառնալիքով յափշտակելով 3 մլն դրամ, 20 հազար դոլար, ոսկեայ զարդեր եւ արժէքաւոր 6 նկարներ՝ դիմել են փախուստի: Նշենք, որ այս թալանից առաջ եւս երկու նմանատիպ դէպք էր պատահել: Յունիսին դիմակաւորուած անձինք աւազակային յարձակում էին գործել «Լինսի» հիմնադրամի «Ճանապարհային շինարարութիւն» ծրագրի գրասենեակի նախկին տնօրէն Էդուարդ Բեգոյեանի տան վրայ:*

*Նմանօրինակ յարձակում կատարուել էր նաեւ Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին ղեկավար, Կադաստրի պետական կոմիտէի պաշտօնեայ Աղուան Գրիգորեանի տան վրայ:*

# ԼՈՒՐԵՐ

## ՄԱՀԱՑԱԾ ԶԻՆՈՒՈՐԻ ՄԱՅՐԸ ԿԸ ՊՆԴԷ, ՈՐ ԻՐ ՏՂԱՆ ՍՊԱՆՆԱԾ ԵՆ ԴԱԺԱՆԱԲԱՐ ԾԵԾԵԼՈՎ

*Անցեալ Ուրբաթ Հայաստանի բանակին մէջ մահացած զինուորի հարազատները կը պնդեն, որ 18-ամեայ տղուն ո՛չ թէ անզգուշութեամբ մահ պատճառուած են, այլ սպաննած են ծեծելով: Այս մասին կը հաղորդէ «Ազատութիւն» ռատիօկայանը:*

*Համաձայն պաշտօնական տեղեկատուութեան, Երեւանէն Լեռնային Ղարաբաղ զօրակոչուած, 1992-ի ծնունդ Աղասի Աբրահամեան մահացած է Ղարաբաղի զօրամասերէն մէկուն մէջ 26 Օգոստոսին, ժամը 21:30ի սահմաններուն: Անզիտակից վիճակով զինուորական հիւանդանոց տեղափոխուելէն մէկ ժամ անց, 18ամեայ զինուորը մահացած է:*

*Ութ ամիս առաջ բանակ զօրակոչուած Աղասիի մայրը՝ Գայիանէ Աբրահամեան կ՛ըսէ, որ որդիի մարմինին վրայ բազմաթիւ վնասուածքներ կան, որ կը վկայէ զայն դաժանաբար ծեծելու մասին: «Իմ երեխային դաժանաբար ծեծելով սպաննել են: Ես առողջ երեխայ եմ տուել, առողջ էլ ուզում էի ստանալ, ոչ թէ մահացած բերէին-դնէին իմ տանը եւ ինձ մխիթարէին»,- կ՛ըսէ մայրը:*

*«Lragir.am»ի հետ զրոյցի ընթացքին ան նշած է, որ իր տղուն մարմինը տուն բերած են քաղաքացիական համազգեստով զինուորականներ, որ հեռացած են անմիջապէս, առանց նոյնիսկ ներողութիւն խնդրելու:*

*Պաշտպանութեան նախարարութիւնը, նախաքննութեան շահերէն բխելով, տեղեկատուութիւն չի տրամադրեր, թէ ո՞վ կամ ովքե՞ր զինուորին դիտաւորութեամբ ծանր վնասուածքներ պատճառած են, ինչո՞ւ հրամանատարական կազմը չէ կրցած միջամտել կատարուածին, եւ կամ ի՞նչ կարգի վնասուածքներ ստացած է զինուորը, որ հիւանդանոցին մէջ անզօր եղած են փրկել անոր կեանքը:*

*Ըստ իրաւապաշտպաններու, բանակին մէջ այս տարուայ ընթացքին արդէն 20-րդ դէպքն է, երբ զինուորը, ըստ նախաքննութեան, կա՛մ ինքնասպանութիւն կը գործէ, կա՛մ կը մահանայ ուրիշի ձեռքերով:*

*Պաշտօնական տուեալներով՝ 2010-ին հայկական զինուած ուժե-*

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՊԱՇՏՊԱՆԵԼ

*Շարունակուած էջ 1-էն*

*ժամանակակից Թուրքիայի մասին մեր գործընկերների պատրանքները՝ բացայայտելով հայերիս համար պատմական փորձով ճանաչելի քաղաքականութեան արդի դրսեւորումները»,- ըսած է Սարգսեան::*

*«Այդուհանդերձ, մենք հաւատարիմ ենք Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները առանց նախապայմանների կարգաւորելու մեր ուղուն եւ դիրքորոշմանը: Թուրքիան պէտք է իր մէջ ուժ գտնի յարգելու իր իսկ կողմից ստանձնած պարտաւորութիւնները՝ տուրք չտալով իրեն ժամանակակից տարածաշրջանային պետութիւն համարողին պատիւ չբերող պահանջներին:*

*«Բայց Թուրքական կողմը պէտք է հասկանայ նաեւ, որ այս արձանագրութիւնները բաց, անժամկէտ հնարաւորութիւն չեն: Մեր բարեկամներից շատերը մեզ խորհուրդ էին տալիս սպասել մինչեւ Թուրքիայի խորհրդարանական ընտրութիւնները: Այնպէս որ, առաջիկայ մի քանի ամիսների ընթացքում մենք կը տեսնենք՝ արդեօ՞ք խորհրդարանական ընտրութիւններից յետոյ Թուրքիայում առկայ է մօտեցումների փոփոխութիւն, թէեւ անկեղծօրէն ասած՝ անցած երկու ամիսները լաւատեսութեան հիմքեր չեն տուել: Ըստ այդ դիտարկումների, մենք կ՛որոշենք նաեւ արձանագրութիւնների ուղղութեամբ մեր հետագայ քայլերը»,- եզրակացուցած է Սերժ Սարգսեան:*

*Սերժ Սարգսեան իր խօսքին մէջ անդրադարձած է նաեւ ղարաբաղեան հարցին, յայտարարելով որ, նոր ռազմական արկածախնդրութեան պարագային Հայաստան պիտի չվարանի կրկին հակառակորդին խաղաղութիւն պարտադրելու:*

*«Այս տարի ականատես եղանք, թէ ինչպէս Հարաւային Սուտանը, տասնամեակներ տեւած պայքարից յետոյ, ձեռք բերեց իր անկախութիւնը՝ հաստատելով ինքնորոշման իրաւունքի իրագործման համաշխարհային փորձը եւս մէկ նախադէպով: Արցախի պարագայում այդօրինակ ելքը նոյնպէս անխուսափելի է, չնայած այսօր դեռեւս չեմ կարող խօսել ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացում Ատրպէյճանի դիրքորոշման մեղմացման մասին»,- ըսած է Սարգսեան:*

*«Ամռանը հասել էինք մի կարեւոր հանգրուանի, երբ թէ՛ միջնորդ երկրները, եւ թէ՛ միջազգային հանրութիւնն ակնկալում էին, որ խնդրի կարգաւորման առնուազն հիմնական սկզբունքների շուրջ համաձայնութեան ձեռքբերումը մօտ է: Այդ առումով կազանեան հանդիպումը իւրատեսակ փորձաքար էր հակամարտութիւնը խաղաղ բանակցային ճանապարհով եւ հնարաւորինս արագ կարգաւորելու կողմերի անկեղծութիւնն ու հաստատակամութիւնը գնահատելու համար: Ինչպէս տեսանք, Ատրպէյճանը Կազանում եւս քայլ կատարեց՝ հրաժարուելով ընդհանուր յայտարարի գալուց եւ նոր խոչընդոտներ ստեղծելով հետագայ համաձայնութեան համար»:*

*Շարունակելով նախագահը ըսած է,- «Համոզուած եմ, որ շատերդ էք կիսում այն եզրահանգումը, որ Պաքուն պատրաստ չէ խաղաղութեան, քանի որ հնարաւոր չէ խաղաղութիւն հաստատել՝ պատերազմ քարոզելով, հաշտեցնել հասարակութիւններին՝ հայատեացութիւն սերմանելով, վստահութիւն կառուցել՝ սպառազինութեան մրցավազք հրահրելով: Ադրբեջանի նման վարքագիծն անընդունելի է եւ մեր քայլերը կը լինեն համարժէք: Համոզուած եղէք՝ նոր ռազմական արկածախնդրութեան պարագայում Հայաստանը չի վարանելու կրկին հակառակորդին խաղաղութիւն պարտադրել»:*

## ՍԷՅՐԱՆ ՕՀԱՆԵԱՆ. «ԱԴՐԲԵՋԱՆՆ ԱՐԱԳ ԶԻՆՒՈՒՄ Է, ՄԵՆՔ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՈՐԱԿԸ ԵՒ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ»



**Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան**

*Հայաստանի անկախութեան օրուան նուիրուած շքերթին ներկայացուելու են 20 տարուայ աշխատանքն ու զինուած ուժերի պատրաստութեան արդիւնքները: Այդ մասին Օգոստոսի 30-ին կայացած ճեպազրոյցում յայտնել է Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը, Տաւուշի մարզի զօրամասերից մէկը կատարած այցի շրջանակներում:*

*Հարցին, լինելո՞ւ է արդեօք Հայաստանի շքերթը համարժէք պատասխան Պաքւում կայացած շքերթին, Օհանեանն ընդգծել է, թէ այն առաջին հերթին համարժէք է լինելու, երկրորդ, շքերթով չի որոշւում զինուած ուժերի մարտունակութիւնը: Նա ընդգծել է, որ հարցը ոչ թէ քանակի, այլ որակի մէջ է:*

*«Ադրբեջանն արագ զինւում է, իսկ մենք բարձրացնում ենք անձնակազմի որակն ու պատրաստութիւնը, քանի որ չպատրաստուած մարդու ձեռքին ամենաժամանակակից զէնքը ոչ աւելին է, քան մետաղի ջարդօնը: Մենք տեսել ենք քանակական գերազանցութեան արդիւնքը: Հայկական ստորաբաժանումների հմուտ գործողութիւնների արդիւնքում սպառազինութիւնը յայտնւում էր մեր ձեռքում»:*

*Ադրբեջանի վրայ պէտք է լուրջ միջազգային ճնշում բանեցուի հրադադարի ռեժիմի խախտման համար, յայտարարել է նախարար Օհանեանը:*

*Դիտարկմանը, որ հրադադարի ռեժիմի խախտումներն ադրբեջանական կողմից ակնյայտօրէն աւելի շատ են, նախարարը պատասխանել է, թէ հայկական զինուած ուժերն իրենց առջեւ նպատակ չեն դնում խախտել հրադադարի ռեժիմը:*

*«Մենք հետեւում ենք իրավիճակին եւ չենք պատասխանում անկանոն կրակոցներին, պատասխանում ենք միայն թիրախային գնդակոծմանը»,- նկատել է Օհանեանը:*

*Նրա խօսքով, տուեալ հարցում Ադրբեջանի վրայ պէտք է լուրջ ճնշում գործադրուի եւ առաջին հերթին այն երկրների կողմից, որոնք զբաղուած են հակամարտութեան կարգաւորմամբ:*

*Նախարարի խօսքով, իրավիճակը վերլուծւում է եւ հակառակորդը համարժէք պատասխան է ստանում:*

## ԴԺՈՒԱՐ ԹԷ ԲԱՑԱՅԱՅՏՈՒԻ

*Շարունակուած էջ 1-էն*

*կին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորութեամբ, վարկաբեկելու նպատակով», - կը գրէ փենինկթըն աւելցնելով. - «Այն հանգամանքը, որ զոհուածներու հարազատներու մեծ մասը կը խուսափի հրապարակել մահուան հանգամանքներուն վերաբերող մանրամասնութիւնները, ալ աւելի կ՛արժեւորէ շրջանառուող այս լուրերը»:*

*«Լուրեր կը շրջին նաեւ ծպտուած դիպուկահարներու մասին, որոնք կը սպաննէին ցուցարարներուն, որպէսզի հետագային իշխանութիւնները կարողանան արտակարգ դրութիւն մտցնել՝ այդ քայլը պատճառաբանելով հետագայ զոհերը կանխելու ցանկութեամբ», - ըսուած է տեղեկագրին մէջ:*

*Ամերիկացի դիւանագէտը իր տեղեկագիրը կ՛աւարտէ հետեւեալ եզրակացութեամբ. - «Տակաւին կրնանք արձանագրել, որ Մարտի 1-2 բախումներու մասին լիարժէք ճշմարտութիւնը ոչ Հայաստանի հասարակութիւնը եւ ոչ ալ միջազգային հանրութիւնը երբեք պիտի չիմանան: Հակառակ իշխանութիւններու եւ ընդդիմութեան վարկածները իրարամերժ են, այդուհանդերձ անոնց բնոյթը լուրջ մտահոգութեան առիթ կու տայ՝ առկայ ճգնաժամին իշխանութիւններու արձագանքի վերաբերեալ: Մտահոգիչ է նաեւ այն հանգամանքը, որ կառավարութիւնը հրապարակայնօրէն հաշուետու չէ այն կոշտ եւ մահուան հանգեցրած միջոցներուն համար, որ ձեռնարկուած են: Քանի դեռ իշխանութիւնները անկախ ու թափանցիկ միջոցներով Հայաստանի քաղաքացիներուն չեն բացատրած, թէ ինչ տեղի ունեցաւ Մարտի 1-ի մութ ժամերուն, այս իրադարձութիւններու խայտառակութիւնը պիտի շարունակէ հետապնդել իշխանութիւններուն՝ կասկածի տակ դնելով անոնց օրինականութիւնը»:*


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ**

**(626) 797-7680**

## ԱՆՈՐՈՇ ԻՐԱՎԻՃԱԿ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ



*Սուրիոյ ներքին ապահովութիւնը խախտող իրավիճակը կը շարունակուի: Ցարդ զոհ գացած են 2200 քաղաքայիններ եւ 500 զինուորներ: Այս առթիւ խիստ պատժամիջոցներու ծրագիրներ կը մշակուին Եւրոպական Միութեան կարգ մը երկիրներու եւ ՄԱԿ-ի ապահովութեան խորհուրդին կողմէ: Այս կապակցութեամբ տարբեր կեցուածք որդեգրած են Ռուսաստանը, Չինաստանն ու Արաբական Լիկան: Միւս կողմէ Պաշշար Էլ Ասատ կը պնդէ որ սկսած է գործադրել պետութեան կողմէ որդեգրուած բարենորոգումներու ծրագիրը: Երեւոյթ մը որուն իրագործումը հանգրուանային է եւ ժամանակի կը կարօտի:*

*Ալ-Ֆըթեր տօնի առաջին օրը Սուրիոյ տարբեր քաղաքներու մէջ տեղի ունեցած հակակառավարական ցոյցերու ճնշման ժամանակ սպաննուած է նուազագոյնը 17 մարդ: «Ցուցարարներու եւ անվտանգութեան ուժերու միջեւ բախումները սկսած են այսօր, տօնական աղօթքէն անմիջապէս ետք: Անոնք տեղի ունեցած են նաեւ մայրաքաղաք Դամասկոսի մէջ»,- յայտնած է «Սուրիական յեղափոխութեան համակարգող խորհուրդը»:*

*Անոնք տեղեկացուցած են, որ զոհերէն հինգը, ներառեալ մէկ երեխայ արձանագրուած են Սարմին գիւղին մէջ: Զգալի թիւով զոհեր կան Հոմսի եւ անոր շրջակայքը:*

## 50 ՀԱԶԱՐ ՄԱՀԵՐ ԼԻՊԻՈՅ ՄԷՋ




*Միջազգային լրատու գործակալութեանց տեղեկատուութեան համաձայն վերջին հինգ ամիսներու քաղաքացիական կռիւներու ընթացքին Լիպիոյ մէջ մահացողներու թիւը հասած է 50,000-ի:*

*Քազաֆիի «Պապ ալ Ազիզիա» նստավայրի մօտ յայտնաբերուած են աւելի քան 150 անշնչացած մարմին: Համալիրի պահակախումբը փախչելէն առաջ զանգուածաբար սպաննած են բոլոր ձերբակալուածները: Որոշ տեղեկութիւններով՝ անոնց վրայ ձեռքնառումբեր նետած են:*

*Աւելի վաղ՝ Օգոստոս 25ին, կը հաղորդուէր, որ ապստամբները Թրիփոլիի բանտերէն մէկուն մէջ յայտնաբերած են 140 անշնդացած մարմին: Այս առթիւ նշենք նաեւ որ վերջին օրերու ընթացքին Ալճերիա ապաստանած են Լիպիոյ նախագահ Մուամմար Քազաֆիի ընտանիքի անդամներէն 31 հոգի: Իսկ Լիպիոյ նորահաստատ պետութեան փոխանցման Խորհուրդի նախագահը Ալճերիոյ պատասխանատուներէն պահանջած է հոն ապաստանած լիպիացիներուն վերադարձը:*

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՆԿՎԱԲ՝ ԱԲԽԱԶԻԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ

*Աբխազիոյ կեդրոնական ընտրական յանձնաժողովը յայտարարած է նախագահական ընտրութիւններու արդիւնքները: Երկրի նախագահ դարձած է Ալեքսանդր Անկվաբ, որ ստացած է ընտրողներու ձայներու 54,9%: Այս մասին կը յայտնէ "ՌԻԱ Նովըսթի"ն:*

*Նախապէս յայտարարուած ոչ պաշտօնական արդիւնքներուն համաձայն? Անկվաբ նոյնպէս դարձած է յաղթող:*

*Ընդհանուր առմամբ այս թեկնածուի օգտին քուէարկած է 58.657 մարդ:*

*Աբխազիոյ մէջ արտահերթ նախագահական ընտրութիւններ իրականացնելու անհրաժեշտութիւն յառաջացաւ Մայիսին, երկրի նախկին նախագահ Սերգէյ Բաղապշի մահուան պատճառով:*

www.massisweekly.com

## «ՃՈՒՄՀՈՒՐԻՅԷԹ» - ԿԱՐԵՒՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՎ



*Սթամպուլի ծանր յանցագործութիւններ քննող 9րդ դատարանը կարեւոր որոշում կայացուցած է Հրանդ Տինքի սպաննութեան դատական գործով. դատարանը պահանջած է սպանութեան իրականացման պահուն կատարուած բոլոր հեռաձայնային ձայնագրութիւնները:*

*Սթամպուլի ծանր յանցագործութիւններ քննող 14րդ դատարանը Տինքի ընտանիքի փաստաբաններու միջնորդութեամբ Հեռահաղորդակցութեան նախարարութենէն պահանջած է դէպքի վայրի մէջ կատարուած բոլոր հեռախօսազանգերու ձայնագրութիւնները:*

*Ինչպէս կը հաղորդէ NTV-ն, Հեռահաղորդակցութեան նախարարութիւնը մերժած է այդ պահանջը՝ պատասխանելով, թէ կասկածեալ կամ մեղադրեալ չեղող բազմաթիւ անձերու հեռախօսային խօսակցութիւններու ձայնագրութիւնները վերցնելը հաւասարազօր է մարդոց անձնական կեանք ներխուժելուն: Միեւնոյն ժամանակ այս որոշումը չեղեալ յայտարարելու համար նախարարութիւնը վճռաբեկ գանգատ ներկայացուցած է ծանր յանցագործութիւններ քննող 9րդ դատարանին:*

*Առարկութիւնը քննող դատարանը քուէարկութեամբ կայացուցած որոշման մէջ «անձնական կեանք ներխուժելու» հիմնաւորումը չէ ընդունած եւ մատնանշած, որ անհրաժեշտ է ուղարկել պահանջուած ձայնագրութիւնները:*

*«Ճումհուրիյէթ» պարբերականը կը նշէ, որ Հեռահաղորդակցութեան Նախարարութեան ձայնագրութիւնները կը ջնջուին հինգ տարին մէկ: Իսկ Տինքի սպանութեան օրը կատարուած ձայնագրութիւնները պիտի ջնջուին հինգ ամիս ետք:*

## ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ Կ'ԱԿՆԿԱԼԷ

*Շարունակուած էջ 1-էն*

*նութիւններ, «Սուրբ Յարութիւն» հիմնադրամին պատկանող գերեզմանատունը:*

*«Բազմաթիւ շէնքեր են, որոնք քաղաքի կեդրոնն են, որոնք բաւական լուրջ միջոցներ կրնան ապահովել համայնքին համար»,- մանրամասնեց Արա Գոչունեան:*

*«Ժամանակ» թերթի գլխաւոր խմբագիրին համաձայն հայկական համայնքը պիտի տնօրինէ այդ շէնքերու վարձակալութեան գումարները, որոնք պիտի ծախսուին համայնքի խնդիրներու լուծման նպատակով:*

*«Ծրագիրներ կան, որոնք այսօր նիւթական հնարաւորութիւններու պակասի հետեւանքով չեն իրականացուիր. դպրոցներու արդիականացում, երիտասարդական ծրագիրներ, մշակութային բազմաթիւ նախաձեռնութիւններ»,- մասնաւորեցրեց Արա Գոչունեան:*

*Ազգային փոքրամասնութիւններէն ամենամեծը Թուրքիոյ հայկական համայնքն է: Քրիստոնեայ հայերուն թիւը, ըստ Թրքական «Զաման» թերթի, 65 հազար է, հրէաներուն թիւը 23 հազար, ուղղափառ յոյներուն թիւը՝ 2500:*

*Ազգային փոքրամասնութիւններու իրաւունքները պաշտպանելու մէջ մասնագիտացած փաստաբան Քեզբան Հաթեմի «Զամանին» ըսած է թէ, Թուրքիոյ հանրապետութեան պատմութեան մէջ այս առաջին եւ շատ նշանակալից շարժումն է:*

*«Սա իրաւունքներու վերականգնում է: Սա Լօզանի համաձայնագրի պահանջներու կատարում է, որ մեր երկրի ոչ մահմետական քաղաքացիներուն թոյլ կուտայ իրենք-զիրենք համահաւասար քաղաքացիներ զգալ Թուրքիոյ մէջ», - ըսած է կին փաստաբանը:*

*Փրոֆեսոր Այհան Աքթար, որ Թուրքիոյ ազգային փոքրամասնութիւններու մասին շարք մը գիրքերու հեղինակ է, կառավարութեան որոշումը յեղափոխական նկատելով ըսած է, որ այն արժանի է ծափահարութիւններու:*

*«Ամենակարեւորը՝ Թուրքիան այդ կատարեց սեփական կամքով, մինչեւ արտաքին ճնշումներու հանդիպիլը: Եթէ կառավարութիւնը որեւէ նախաձեռնութիւն չցուցաբերէր, ապա Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանի կողմէ ընթացող գործերու կապակցութեամբ Թուրքիան կ'ենթարկուէր շարք մը պատժամիջոցներու», - յայտարարած է Աքթար:*



# ԻՆՉՈՒ Է ՄԵՆԱՇՆՈՐՀ ՏՐՒՈՒՄ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ՝
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

*ՀՀ ԱՆ տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի բաժնից ստացուած հաղորդագրութիւնում պարզաբանւում են «Խղճի եւ կրօնական ազատութիւնների մասին» նոր օրէնքի նախագծի շուրջ լրատուամիջոցներում բարձրացուած հարցերը: Պարզաբանման մէջ, մասնաւորապէս նշւում է.*

*«ՀՀ արդարադատութեան նախարարութիւնը եւ ԵԱՀԿ երեւանեան գրասենեակը 2011 թուականի Օգոստոսի 19-ին նախաձեռնել էին «Խղճի եւ կրօնական ազատութիւնների մասին» նոր օրէնքի նախագծի, ինչպէս նաեւ փոխկապակցուած այլ օրէնքներում փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին նախագծերի շուրջ հանրային քննարկում, որի ընթացքում ներկայացուեցին իրականացուող օրէնսդրական փոփոխութիւնները, նպատակը եւ հիմնաւորումները:*

*Քննարկմանը յաջորդած շաբաթուայ ընթացքում որոշ լրատուամիջոցներ անդրադարձան այս թեմային: Նշենք, որ հրապարակումներում առկայ հարցադրումների հիմնական մասը պարզաբանուել էր քննարկման ընթացքում եւ տրուել էին սպառիչ պատասխաններ:*

*Այդուամենայնիւ թիւրընկալումներից խուսափելու համար նախարարութիւնը նպատակայարմար է գտնում առանձնացնել բոլոր հիմնական հարցադրումներն ու եւս մէկ անգամ պատասխանել չահագրգիռ կողմերին մտահոգող հարցերին:*

*Քննարկման մասնակիցների մի խումբ մտահոգութիւն էր յայտնում, թէ օրինագծով մենաշնորհ է տրւում Հայ առաքելական եկեղեցուն, ինչու՞:*

*Պատասխան -Հայ առաքելական եկեղեցու բացառիկ կարգավիճակը արդէն իսկ սահմանուած է ՀՀ Սահմանադրութեամբ ( ՀՀ Սահմանադրութիւն, գլուխ առաջին յօդուած 8.1), որի համաձայն. «Հայաստանի Հանրապետութիւնում եկեղեցին անջատ է պետութիւնից: Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչում է Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպէս ազգային եկեղեցու բացառիկ առաքելութիւնը հայ ժողովրդի հոգեւոր կեանքում, նրա ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործում»: Դրանից ելնելով՝ Հայ առաքելական եկեղեցուն ՀՀ օրէնսդրութեամբ տրուած են մի շարք առանձնաշնորհներ, ինչպէս նաեւ Հայ առաքելական եկեղեցու եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ յարաբերութիւններն կարգաւորւում են առանձին օրէնքով: Սակայն Հայ առաքելական եկեղեցուն տրուած առանձնաշնորհներից եւ ոչ մէկը չի կարող մեկնաբանուել որպէս այլ կրօնական կամ դաւանաբանական պատկանելիութիւն ունեցող անձանց խղճի կամ համոզմունքի ազատութեան իրաւունքի խախտում, եւ նախագիծը միտուած է նաեւ դրա ապահովմանը:*

*2. Ինչու՞ է նախագծով կրօնական կազմակերպութիւններին արգելւում բարեգործութիւն անել:*

*Պատասխան - Նախագծով չի արգելւում կրօնական կազմակերպութիւններին բարեգործութիւն անել: Բարեգործութեան կատարումը չի հանդիսանում նշուած օրէնքի նախագծի կարգաւորման առարկայ եւ պատշաճ կերպով կարգաւորուած է «Բարեգործութեան մասին» ՀՀ օրէնքով:*

*3. Ի՞նչ չափանիշներով է որոշուել կրօնական կազմակերպութեան գրանցման համար անդամների անհրաժեշտ 200 նուազագոյն շեմը մինչեւ 25 իջեցնելը:*

*Պատասխան - Նախագծով նախատեսւում է առաւելագոյնս հեշտացնել կրօնական կազմակերպութիւնների պետական գրանցման գործընթացը, այդ թւում՝ նուազեցնելով կրօնական կազմակերպութիւնների գրանցման համար գործող օրէնքով նախատեսուած անդամների թիւը: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախորդ նախագծերի վերաբերեալ ԵԽ Վենետիկի յանձնաժողովի եւ ԵԱՀԿ - ի համատեղ եզրակացութիւնում 200 թիւը համարուել էր խիստ անհամաչափ:*

*4. Ի՞նչ է նշանակում ոչ պատշաճ հոգեւորսութիւն, արդեօք դրա հասկացութիւնը չի հակասում Եւրոպական կոնվենցիային:*

*Պատասխան - Նախագծի 4-րդ յօդուածով յստակ սահմանւում են խղճի, կրօնի եւ համոզմունքի ազատութեան արտայայտման իրաւունքի սահմանափակման հիմքերը, ինչպէս նաեւ սահմանւում է «ոչ պատշաճ հոգեւորսութիւն» հասկացութիւնը, մասնաւորապէս.*

*Ոչ պատշաճ հոգեւորսութիւնը՝ այլ կրօնական կամ դաւանաբանական պատկանելիութիւն կամ հայեացքներ ունեցող անձանց նկատմամբ դաւանափոխ անելու նպատակով կրօնական բնոյթի ցանկացած քարոզչական ներգործութիւն, որը դրսեւորւում է այդ անձի կամ նրա մերձաւորի նկատմամբ ֆիզիքական կամ հոգեբանական բռնութիւն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, նիւթական կամ սոցիալական բնոյթի առաւելութիւն տրամադրելով կամ կախուածութիւնը օգտագործելով, այլ կրօնի, համոզմունքի կամ կրօնական կազմակերպութեան նկատմամբ թշնամանք յարուցելով կամ ատելութեան հրահրելով, անձին երկու կամ աւելի անգամ հետապնդելով, տասնչորս տարին չլրացած անչափահասի նկատմամբ՝ առանց նրա ծնողների կամ խնամակալների համաձայնութեան:*

*Ոչ պատշաճ հոգեւորսութեան այս սահմանումը վերցուած է Եւրոպական դատարանի իրաւակիրառ պրակտիկայից, մասնաւորապէս ամբողջութեամբ համապատասխանում Կոկինակիսը ընդդէմ Յունաստանի գործով Եւրոպական դատարանի կողմից տրուած ոչ պատշաճ պրոսելիտիզմի հասկացութեանը:*

*5. Որո՞նք են այն վտանգաւոր ձեւակերպումները, որոնք կարող են վնասել Հայ առաքելական եկեղեցուն:*

*6. Պատասխան - Նախագծով սահմանուած չէ որեւէ դրոյթ, որը կարող է վնասել Հայ առաքելական եկեղեցուն:*

*7. Վերահսկելով կրօնական կազմակերպութիւններին՝ արդեօ՞ք ՀՀ ԱՆ-ն չի վերածւում հաւատաքննիչի, կամ հոգեւոր ոստիկանի:*

*Պատասխան - Ըստ էութեան, արդարադատութեան նախարարութիւնը այս նախագծով էապէս նուազեցրել է կրօնական կազմակերպութիւնների գործունէութեան նկատմամբ իրականացուող պետական վերահսկողութիւնը:*

*Մասնաւորապէս էապէս նուազեցուել են կրօնական կազմակերպութեան կողմից գրանցման համար ներկայացուող պարտադիր փաստաթղթերի ցանկը:*

*Այսպէս՝ գործող օրէնքով կրօնական կազմակերպութիւն գրանցելու համար պահանջւում է տուեալ կազմակերպութեան կրօնականութեան մասին եզրակացութեան ստացումը, ինչը վերոյիշեալ նախագծով հանուել է:*

*Կրօնական կազմակերպութիւնների նկատմամբ նախագծով նախատեսուած վերահսկողութիւնը կարելի է բաժանել երկու մասի՝ 1. Նրանց տարեկան հաշուետուութիւնների ստուգում, որը նպատակաուղղուած է կրօնական կազմակերպութիւնների կողմից նախագծի մի շարք պահանջների պահպանման ապահովմանը (օրինակ՝ ֆինանսաւորման թափանցիկութիւն) եւ կրօնական կազմակերպութիւնների դադարեցումը եւ կասեցումը, որը կարող է իրականացուել միայն յստակ սահմանուած է կոպիտ եւ որոշակի խախտումների առկայութեան դէպքում: Ընդ որում որպէս կրօնական կազմակերպութիւնների իրաւունքների եւ օրինական շահերի պաշտպանութեան երաշխիք, կրօնական կազմակերպութեան լուծարումը կարող է իրականացուել միայն դատական կարգով:*

*Վերահսկողական այլ լիազօրութիւններ այս նախագծով արդարադատութեան նախարարութեանը կամ որեւէ այլ պետական մարմնին չի վերապահւում:*

*8. Ընդունելի՞ է արդեօք այն կարծիքը, թէ օրինագծով կրօնական կազմակերպութիւններին աւելի շատ իրաւունքներ է տրւում, քան՝ պարտականութիւններ:*

*Պատասխան - Անդրադառնալով իրաւունքներին եւ պարտականութիւններին՝ հարկ է նշել, որ սահմանուած իրաւունքները եւ դրանց կենսագործումը լիովին բաւարար են ՀՀ սահմանադրութեան 26 -րդ յօդուածով եւ Եւրոպական կոնուեցիայի 9-րդ յօդուածներով սահմանուած խղճի ազատութեան իրաւունքի կենսագործման համար, իսկ սահմանուած պարտականութիւնները լիարժէք համաչափ են այդ իրաւունքի Սահմանադրութեամբ եւ Կոնվենցիայով նախատեսուած սահմանափակումներին:*

*Յաւելենք նաեւ, որ «Խղճի եւ կրօնական ազատութիւնների մասին» օրէնքի նախագիծն արդէն ուղարկուել է ԵԽ Վենետիկի յանձնաժողով, եզրակացութիւնը ստանալուց յետոյ, ամենայն հաւանականութեամբ 2011-ի Նոյեմբերին օրինագծի շուրջ կ'անցկացուեն հանրային լայն քննարկումներ»:*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**



# ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ. «ՓՆՏՌՈՒՄ ԵՄ ԻՄ ՀԻՆ ԵՐԵՒԱՆԸ»



*ՅԱՍՄԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ*

*Վերջերս Երեւանում կայացաւ նշանաւոր դիրիժոր եւ կոմպոզիտոր Հենրիկ Անասեանի դուդուկի համար գրուած կոնցերտի պրեմիերան: Անցեալ տարի ստեղծագործութիւնն առաջին անգամ կատարուել է Վենեզուելայում՝ Կարակասի Սիմոն Բոլիվար նուագախմբի նուագակցութեամբ՝ նուագախմբի 25-ամեակի կապակցութեամբ: Դուդուկը դասականացնելու գաղափարը Անասեանը վաղուց ունէր: Մաեստրոյին մտահոգել էր Թուրքերի յստակ ոտնձգութիւնը դէպի մեր ազգային գործիքը:*

*«Նրանք սովոր են փախցնել, Թալանել նաեւ մեր մշակոյթն ու արուեստը: Ստամպուլում համերգների ժամանակ նկատել էի, որ իրենց ժողովրդական գործիքների մէջ հնչում է նաեւ դուդուկը: Մեղադրանք չեմ ներկայացնում հայ դուդուկահարներին, բայց մութ ու ցուրտ տարիներին հենց նրանք Թուրքերին սովորեցրին դուդուկ նուագել: Այդ մտավախութիւնն ինձ դրդեց, որ դուդուկը համաշխարհային համբաւ ձեռք բերի եւ այդ ճիգի մէջ որոշեցի, որ պահպանման լաւագոյն տարբերակը դուդուկը դասականացնելն է: Դուդուկը միակ գործիքն է, որ ազգային է, եւ սա առաջին դասական ստեղծագործութիւնն է դուդուկի հնչողութեամբ», «Ազգ»-ի հետ զրոյցում պատմում է Հենրիկ Անասեանը:*

*Մաեստրոն ցաւով յիշում է, որ ստեղծագործութիւնը նախ յանձնել է երկու հայ դուդուկահարների՝ առաջարկելով նրանց կատարել ստեղծագործութիւնը, «սակայն հայերը միշտ ուշացած են: Գնահատում ենք մեր արժէքները, երբ օտարն է այն ներկայացնում: 2 տարի սպասեցի հայ երաժիշտների արձագանքին, բայց նրանք լուռ էին: Յետոյ նոտաները կարդաց ֆուստաչէն ու… խենԹացաւ: Օտարն առաջինը գնահատեց», ասում է Անասեանը: Կոմպոզիտորը պատմում է, որ յետագայում, համերգի տեսագրութիւնից յետոյ մէկ այլ դուդուկահար՝ Գէորգ Դաբաղեանը, ցանկութիւն յայտնեց կատարելու:*

*Անասեանը խոստովանում է, որ տարիներ առաջ արուեստագէտները նեղւում էին գեղարուեստական խորհուրդ հասկացութիւնից: Սակայն ներկայ պայմաններում խորհրդի անհրաժեշտութիւնը զգալի է:*

*«Տեղից վեր կենողը կոմպոզիտոր է, ով ինչ ուզում է, անում է: Անկախ նրանից, Թէ իր գիտելիքների պաշարը որքան է: Մի՞Թէ այս իրավիճակում չպէտք է մէկը լինի, որ վերահսկի, ուղղութիւն ցոյց տայ, հարցնի, Թէ ինչ տեքստի տակ է երգ գրում: Անուններ չեմ ցանկանում տալ, բայց մարդիկ կան, որ կործանեցին մեր էստրադային երաժշտութիւնը: Մեր էստրադայում Թափթփուկներ են: Վախենում եմ մտնել կոնսերուատորիա, տեսնել, Թէ ինչպիսի ցածր մակարդակ է աճում: Ժամանակին առանց կրԹութեան երաժշտական ուսումնարան չէին ընդունում: Այսօր կոնսերուատորիա են ընդունւում մարդիկ, ովքեր նոտա չգիտեն: Սոսկալի երեւոյԹ է»:*

*«Դժգոհ եմ անվաստակ վաստակաւորների կոչում ունեցողներից», ասում է մաեստրոն: Անասեանին զարմացնում է, որ նորելուկ երգիչներին դարձնում են վաստակաւոր: «Մարդ պէտք է վաստակ ունենայ վաստակաւորի կոչման համար: Ծնուել եմ Հայաստանում, 33 տարի ապրում եմ ԱՄՆ-ում, սակայն ինձ սփիւռքահայ չեմ համարում: Եւ մարդիկ, ովքեր չեն ծնուել Հայաստանում, որոշում են՝ Հայաստանի ծնունդ եմ, Թէ ոչ: Մի՞Թէ Սփիւռքում ապրողն իրաւունք չունի Հայաստանում կոչում ստանալու: 30 տարի Հայաստանում, 33 տարի ԱՄՆ-ում ծառայել եմ հայ ժողովրդին: Իմ հիմնադրած «Սիփան» երգչախմբով 4 անգամ Հայաստանում համերգ եմ տուել: Առանձին համերգներ ունեցել եմ մի քանի տասնեակ անգամ», ասում է Անասեանը՝ չհասկանալով որոշման իմաստը, որ սփիւռքահային չի կարելի կոչում տալ, որովհետեւ հայրենիքում չի բնակւում:*

*«Հարցը կոչումը չէ, այլ վերաբերմունքը», ասում է նա՝ հաւաստիացնելով, որ վիրաւորուած կը զգայ, երբ իրեն «երէկուայ լակոտների հետ» վաստակաւորի կոչում տան:*

*«Նուաստացուցիչ է: Ես իմ հաւատամքն ունեմ: Էլի վերադառնալու եմ Հայաստան, էլի աշխատելու եմ, ստեղծագործելու եմ, բողոքելու», ասում է Անասեանը՝ յաւելելով, որ կարեւորը հայ լինելն է, ոչ Թէ հայ կոչուելը:*

*Տարուայ մեծ մասը Անասեանը բնակւում է ԱՄՆ-ում, այնտեղ են որդիները, Թոռները: Հոլիվուտում հիմնել է «Սիփան» երգչախումբը: 1981-ից ղեկավարում է նաեւ «Սարդարապատ» անսամբլը: Հիմնել է «Հայ արուեստ» երկշաբաԹաԹերԹը, «Անի» տպա-*

*Շար.ը էջ 17*

# Ի՞ՆՉ ԸՆԵՆՔ ՃԱՏՐԱԿԻ ԱԽՈՅԵԱՆՈՎ

*ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ*

*Վերջերս պատահեցաւ հայութիւնը եւ աշխարհը ցնցող դէպքը՝ Լեւոն Արոնեան տիրանալով ճատրակի (chess) համաշխարհային ախոյեանութեան բուռն եւ երկարատեւ ճակատամարտներ տեղի ունեցան աշխարհի ամենափոքրաԹիւ ժողովուրդներէն մէկուն հանճարեղ զաւկին եւ ամենէն բազմամարդ չին, ռուս կամ ամերիկացի ժողովուրդներու ներկայացուցիչներուն միջեւ եւ հայութիւնն ու աշխարհը ցնցող հրաշքի համազօր յաղԹանակին տիրացաւ ամէնէն փոքրիկ ժողովուրդին մեծ զաւակը: Աշխարհի վրայ ուր որ հայ կայ (ո՞ւր չկայ) հրճուեցաւ ու հպարտացաւ անշուշտ շատ հաւանաբար բաժակ մըն ալ կոնծելով իրենց հանճարեղ ազգակիցին կենացը եւ վերջ:*

*Բայց այսքա՞ն է իրաւունքը ախոյեանին: Խօսքը նիւԹականի մասին չէ, որ ստացաւ անշուշտ, այլ բարոյական գնահատանքը, որ ինչքան որ ալ տրուեցաւ անբաւարար է ազգին իր տուածին փոխարէն: Ան արժանի է ազգային հերոսի վայել պատիւներու: Պէտք է պատուել զինք յատուկ տօնախմբուԹիւններով, աւանդաբար սկսելով Լիբանանէն, անցնելով Եւրոպա, հասնելու համար Միացեալ Նահանգներ:*

*Այս առնչութեամբ աննպատակ չէ յիշել որ Եւրոպայի մէկ անկիւնը կայ փոքրիկ երկիր մը՝ ՓորԹուկալը, ուր կը գտնուի գուցէ մեր ամենահարուստ հաստատութիւնը՝ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկը, որուն տնօրէնը՝ իմ վաղեմի բարեկամ Զաւէն Եկաւեանը ձանձրոյԹի պահեր կ՚ունենայ մենակութեան մէջ: Ահաւասիկ զինք զբաղ պահող ազգօգուտ եւ պատուաբեր ձեռնարկ մը՝ Լեւոն Արոնեանը միջազգայնօրէն յարգելու եւ առատ նիւԹականով վարձատրելու: Վստահաբար այդ մեծ մարդուն՝ Գալուստ Կիւլպէնկեանին հոգին ալ պիտի խայտայ այս առԹիւ: Միջազգային ճանաչումի արժանացած հանգուցեալը, որ Իրաքի քարիւղը յայտնաբերող եւ շահագործողներու առաջիններէն մէկը ըլլալուն համար, ՄիւԹըր յայ փըր սէնԹ կոչուած է, մինչեւ այսօր 5% շահաբաժինը փոխանցուելով իր անունը կրող հիմնարկին:*

*Կիւլպէնկեան հիմնարկը այն հաստատութիւնն է որ իր խստութեամբ եւ միջազգային վարկով կրնայ համաշխարհային ուշադրութեան առարկայ դարձնել Լեւոն Արոնեանին սխրագործութիւնը՝ հաւաքոյԹի մը հրաւիրելով համաշխարհային մամուլի ներկայացուցիչները եւ ճատրակի նախկին ախոյեաններն ու այդ մասին գրականութիւն մշակողները:*

*Լեւոն Արոնեան ազգապարծան ցուցակին վերջինն է, բայց միակը չէ: Իրմէ առաջ ալ ունեցեր նք համաշխարհային համբաւի տիրացած չախմաԹիսԹներ, ինչպէս Մեծն Տիգրան Պետրոսեան, որ աշխարհի ախոյեանը եղած է 1963ին, եւ Կերի Գասպարով՝ 1985ին, ի հարկէ երկուքն ալ նուաճելէ յետոյ ՍովիէԹ ՄիուԹեան ախոյեանութիւնը:*

*Դասախօսութեան աւարտին, ըստ աւանդական կարգի, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:*

*Թղթակից*


# ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

## PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

# Մ. ՀԱՅԿԵՆՑԻ ՄԻՆՉԵՒ ԴՐԱԽՏԸ ԵՒ ԱՆԴԻՆ ԳԻՐՔԸ

*ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ*

*Սփիւռքահայ մամուլը, որպէս ազգային մտահոգիչ ու ցնցիչ նիւթի, յաճախ խօսած է եւ կը խօսի հայերէն լեզուի դժբախտ իրականութեան՝ թուլացումին, տկարացումին եւ նահանջին մասին, որոնք, ցաւ ի սիրտ բախելով խլացած ականջներու, կը դառնան «ձայն բարբառոյ յանապատի»:*

*Այս տխուր ու ահաւոր երեւոյթը, ուշադրութիւնը գրաւելով մինչեւ իսկ օտար կազմակերպութիւններու, UNESCO-ի նման պատկառելի հաստատութեան լեզուաբաններու յատուկ ուսումնասիրութեանց եւ քննութեանց որպէս եզրայանգում, Արեւմտահայերէնը դասուած է այլեւս աշխարհի վրայ գործածուող սակայն կորստեան եզրին հասած «Խիստ Վտանգուած» լեզուներով շարքին:*

*Եթէ երբեք այս եւս ահազանգ չէ, այլեւս ի՞նչը կարելի պիտի դառնայ մեր ժողովուրդը ամբողջն ցնցելու, զարթնեցնելու, սթափեցնելու եւ հրաւիրելու իր անձնական ու ընտանեկան շահերուն եւ բարօրութեանց համահաւասար լարուածութեամբ գործնականապէս մտահոգելու ազգային ինքնութեան ու արժէքներու պահպանութեան եւ մայրենի լեզուին յաւերժութեանը մասին:*

*«Մայրենի»ին ներկայացուցած այսպիսի տխուր իրավիճակին ի տես, որեւէ ազգային մտահոգութիւններ թեթեւացնող հրատարակութիւն անշուշտ ողջունելի եւ գնահատելի կը նկատուի:*

*Վերջերս, սփիւռքահայ մամուլին մէջ գնահատական յօդուածներով դիմաւորուեցաւ Մ. Հայկենցի «Մինչեւ դրախտը եւ Անդին» գրական արգասիքը հանդիսացող գիրքը:*

*Մ. Հայկենցի այս հատորը ոչ միայն ողջունելով կ'ընդունինք, այլ՝ խոր ուրախութեամբ եւ շնորհակալութեամբ: Որովհետեւ այնտեղ կը հնչէ եւ կը կարդանք «Մայրենի»ն իր մաքրութեամբը, իր վեհութեամբն ու իր պերճութեամբը:*

*Այլեւս անհունօրէն նուազած է թիւը այսպիսի կատարեալ հայերէնով արտայայտուողներուն:*

*Մ. Հայկենց, իր այս հատորովը, որ հայ գրականութենէն ներս իր երկրորդ գործն է, թէեւ իր յօդուածներով (ընկերային, քաղաքական, կուսակցական, ազգային, եկեղեցական) միշտ հեղինակաւոր ներկայութիւն մը եղած է հայ մամուլին մէջ, իր այս զոյգ գրքերով սակայն, ան կը դառնայ հայ գրականութեան անդաստանէն ներս վաւերական գրող մը, մշակ մը:*

*«Մինչեւ Դրախտը եւ Անդին»*

*Մ. Հայկենցի այս գործը կու գայ մեզի որակաւոր եւ ճաշակաւոր կերպով պատրաստուած, դիւրընթեռնելի մեծ տառաչափերով, էջերով ու այս բոլորը տրարուած երկնագոյն կապոյտի վրայ նաշխուած ոսկեգոյն անունով խաւաքարտեալ հարուստ կողքի գրքով մը:*

*Հեղինակը գրքին բովանդակութիւնը ներկայացուցած է երկու մասերով:*

*Ա. մաս*

*- «Լոգումը», էջք 10-19.*

*-«Փամփքին Անփոխարինելին», էջ 20-357*

*- «Մարիլին Մալրոն Սթանլիի Ծովին Մէջ», էջք 3645.*

*- «Խաւաքարտէ Մարդը Դրախտէն Դուրս», էջք 46-61.*

*Բ. Մաս*

*- «Նամականի Կամ Դռնբացէք Կորուստեալ Աշխարհի», էջք 64-93.*

*- «Ածուն 21-րդ Դարուն», էջք 94-110.*

*Առաջին մասը չորս պատմուածքներ են, որոնք որպէս գրական յատուկ սեռ այնքան իւրացուած եւ բնականացած են հեղինակի հոգիին եւ շունչին հետ, որ ան կարողացած է փոքր միջոցի մը մէջ տալ կամ զետեղել զանազան կերպարներու, դէմքերու կեանքի ու նկարագրի այլազան, հարուստ եւ ծով երեւոյթներ ամփոփ, կուռ ու ոսկեղնիկ բարբառով մը, որուն սիրոյն զոհ չեն գացած նիւթերուն եւ գաղափարներուն այնքան կարեւոր հանդիսացող նրբութիւններն ու մանրամասնութիւնները:*

*Կարծէք հեղինակին նախասիրութիւնը եղած է առաջին դէմքով կազմելու եղանակը: Ի նչպէս. Առաջին պատմուածքին, «Լոգումը»-ին մէջ թէեւ պատմողը, հեղինակը, ինքը չէ, այլ՝ յոյն Մանոլին, որ գլխաւոր ու առանցքային կերպարն է այդ պատմութեան, պատումը կ'ընթանայ առաջին դէմքով: Իսկ, երկրորդ պատմութեան՝ «Փամփքին Անփոխարինելին»-ին մէջ գլխաւոր կերպարը՝ հեղինակը, տանտէրը ըլլալով, պատումը բնականօրէն կ'ընթանայ առաջին դէմքով:*

*Եթէ պահ մը ուզենք այս չորս պատմուածքներու նիւթերուն վերլուծումը ընել, հիացումով պիտի նկատենք նիւթին համաձայն հեղինակին կատարած ծրագրումը ու անոր զարգացումը:*

*Պատմուածքներուն նիւթերը առնուած ըլլալով իրական կեանքէ եւ կամ եթէ երբեք նոյնիսկ երեւակայական եւ «շինծու» են եղած, այս «շինծու» բառը պիտի փոխարինեմ «ստեղծագործութիւն» բառով:*

*Հայկենցի ստեղծագործութիւններուն ընթերցումը հաճելի ու առինքնող է, յափշտակիչ ու հրապուրիչ է մի քանի պատճառներով:*

*Անոնց նիւթերուն կերպարները թէեւ անուններ կը կրեն, կրնան սակայն պատկանած ըլլալ նաեւ որեւէ անձի, այնքան որ մարդկային երեւոյթն երու հարազատ արտայայտութիւններ են:*

*Երեւոյթներ ներկայացնելու եւ հարցեր պարզաբանելու սրամիտ, ժողովրդական, եւ ինչո՞ւ չէ, քիչ մըն ալ օտար բառերու եւ պատկերներու արտայայտչական լեզուով մը Հայկենց յաջողած է ազդու տպաւորութիւն թողլով ընթերցողին վրայ, զայն ներգրաւել իր աշխարհին մէջ: Ասիկա մեծ յաջողութիւն է գրական պատմուածքներու այս սեռին մէջ:*

*Իրենց ոճային բնոյթին պատճառաւ պիտի չներկայացնեմ պատմուածքները, ընթերցողին վերապահելով անոնց ընթերցանութեանց շնորհած վայելքը: Սակայն, գէթ առաջին երկու պատմուածքներուն մասին մի քանի ուշագրաւ անկարկութիւններ ընեմ:*

*1. «Լոգումը» - ով ընթերցողին կը ներկայացուին պատմութեան գլխաւոր կերպարին (76 տարեկան) ու անոր կողակից «գայմաք» Էլէնիին, որոնց սէրէն բունկած երիտասարդական երջանկութիւնը այլեւս մաշած ու շիջած, ինչպէս նաեւ 61 տարեկանին ինքնաշարժի վթարի մը հետեւանքով յակամայս տարաժամօրէն հանգստեան ու ամլոթեան դատապարտուած Մանոլի Կումպարաքիի կեանքի շղթային զանազան օղակները:*

*Հեղինակը մեծ ճարտարութեամբ կը ստեղծէ այն առիթը, ժամանակը, միջավայրն ու մթնոլորտը, ուր բնական ընթացքով մը արժանապատւութիւնը վիրաւորուած, առնականութիւնը գերեվարուած, ազատութիւնը կորսնցուցած, կնոջը գերի եղած ու անոր նախանձին առարկայ դարձած պատմութեան հերոսը, իր յաջորդական պատումներով հոգիին վրայէն կը թօթափէ ստրկացած ոգին ու այլեւս ձանձրացած «գայմաքս» ըսելէն, վերջապէս կը ձերբազատուի իր բոլոր կապանքներէն (հոգեկան եւ ֆիզիքական) եւ վերագտնելով իր ինքնավստահութիւնն ու առնականութիւնը կը համարձակի ըսելու.- «Մանոլի Կում պարաքին թերեւս «գաւալլը» է... ո՛չ թերեւս... է՛, է՛... տասնըհինգ տարի...: Տանկաքի՞ (ապո՞ւշ)... երբեք»: Այսպէսով ալ կը վերջանայ այս հոյակապ պատմուածքը, որուն կերպարներէն են ինքնաշարժի տէր հայ բարեկամուհի Սեդին, որուն ուղղուած առաջին խօսքն իսկ, որ պատմուածքին ալ առաջին նախադասութիւնն է՝ «Դուն ուզեցիր որ ես վերստին «էրիկ» մարդ ըլլամ», արդէն իսկ Հայկենց լակոնական ոճով մը կարծէք «կ'արտայայտէ պատմուածքին միտ բանն անմիջապէս ստեղծելով հետաքրքրական լարուածութիւն մը, որ կը տեւէ մինչեւ պատմուածքին աւարտական տողերը: Միւս կերպարներն են. ճաշարանատէր Վասիլին, Մանոլիին հարսն ու երկու զաւակները եւ Մանոլիի մարզարանի ծանօթներէն գեղանի «Լոգումն ու «պօյֆրէնտ»ը:*

*2. «Փամփքին Անփոխարինելին»*

*Սոյն պատմուածքը եռամաս կառուցուածք ունի հիմնուած նիւթի բովանդակային տրամաբանական զարգացման վրայ:*

*Այս պատմուածքով Հայկենց կը ներկայացնէ, կրկին իրական կեանքէ առնուած, այլ տրամա մը, այս անգամ հիմնուած կեանքի տարբեր պարագաներու, դրոյթներու, հոգեկան եւ բնազանցական վիճակներու վրայ, սեւեռելով տարբեր հոգեվիճակներ, մտածողութիւններ, հայեցողութիւններ ներկայացնող կերպարներ: Այսպէս, պատմութեան Բ. բաժնին մէջ կը կարդան.*

*«(Նոր վարձակալ կինը՝ Պէթին կ'ըսէ.) Զաւակ չունինք, ազգական չունինք, բարեկամ չունինք, Վինին (ամուսինը) կը զգուի, որովհետեւ առաջուան պէս չի կրնար կարդալ, աչքերը տկարացան վերջերս: Ութսունի կը մօտենայ, գիտէ՞ք: Թող փամփքինին (փամփքինը նախորդ վարձակալին կատուն էր, որուն տէրը հոն էր թողած) հետ խաղայ...»:*

*Փամքինը դառնալով Վինիին սփոփարարը, որպէս ուրախութեան արտայայտութիւն, վերջինս, իր երբեմնի սովորութեան համաձայն նափոլիթան երգեր կը սուլէ:*

*Իսկ, քիչ մը անդին կը կարդանք. «Պէթին շատ կը սիրեմ, շարունակեց ան (Վինին) գեղեցիկ է հոգիով եւ մարմնով, ներսէն դուրս: Կը գուրգուրայ վրաս: Բայց խոշոր ցաւ մը ունիմ: Թոյլ չի տար որ մօտենամ իրեն. կը կարծէ որ մեր տարիքին ամօթ է... նոյնիսկ մեղք... Տէր ողորմեա: Ընկերուհի ալ չունի որ ենթադրեմ թէ յիմար մը խաղացած է խելքին հետ»:*

*Վինի փամփքինի ընկերութեան մէջ վերագտած էր իր կեանքին երջանկութիւնը:*

*Ապա, կ'իմանաք որ, օր մը փամքինը պտոյտի ելած է ու այլեւս չէ վերադարձած:*

*Խորապէս յուզուած Վինին կը դադրի սուլելէ նափոլիթան երգեր:*

*Մ. Հայկենց առանց յայտնելու, լուին կերպով ընթերցողին առջեւ խորհրդածութեանց մեծ դուռ մը բանալով կ'աւարտէ այս սքանչելի պատմուածքը այսպէս. «Բայց կար նորութիւն մը, նորութիւն մը, որ, եթէ ենթադրութիւնս ճիշդ է, բացատրութեան չէր կարօտեր: Բացարձակապէս եւ արդարացիօրէն բացատրութեան չէր կարօտեր: Գիշերները, հեռուստացոյցի վերջին հաղորդումներէն ետք, երբեմն կը լսէի Վինիին մեղմ ու անոյշ նափոլիթան մեղեդիները:*

*Անցնինք Բ. ՄԱՍ-ին:*

*1. «Նամականի Կամ Դռնբացէք Կորուսեալ Աշխարհի» տիտղոսին տակ հեղինակը կը ներկայացնէ չափազանց շահագրգռական հետեւեալ վերնագիրներով՝*

*«Շահնուր-Մահարի»*

*«Շահնուր-Անդրէասեան»*

*«Պուլկարացի Գրիգոր»*

*«Երուսաղէմի Ձեռագիրներուն Հարցը»*

*«Աղբիւր Սերոբ»*

*«Անդրանիկ»*

*«Ամերիկա եւ Հրացան»*

*«Հնչակեան Կուսակցութիւն»*

*«Նոր Օր»*

*Ոչ միայն գրական, այլ՝ պատմաբանասիրական արժէք ներկայցնող գրութիւններ են, որոնց լուրջ, ուսումնասիրուած ու հիմնաւորուած վերլուծումները կու գան լուսաբանելու եւ ճշդելու կարգ մը անորոշութիւններ ու հանգուցային հարցեր:*

*Ինչպէս գրութեանս սկիզբը ցաւով դիտել տուած էի մեր (մայրենի»-ին այսօրուան ներկայացուցած ողբալի վիճակը եւ տրուած ըլլալով որ, Մ. Հայկենցի այս բաժնի վերջին «Նոր Օր» գրութիւնը շօշափած է այս հարցը, կը մէջբերեմ անոր վերջին երկու պարբերութիւններով արտայայտած իր խորհրդածութիւնը որպէս հատու ու արմատական լուծում այս ազգային էական խնդրին:*

*«90 տարի առաջ հովը տարաւ, հուրն ու ծովը լափեցին մեր մարմինն ու հողը: Հովը տարած է մեր տարագիր կեանք ին Թագաւորութիւնը՝ հայ դպրոցը, բայց զայն կարելի է վերականգնել եթէ յայտնուի կամքը կրթական գործը ազատելու գնչուներու քմահաճոյքէն, ժամանակի մը համար աչք առնելով աշակերտներու թիւի կորուստ, պիւտճէական բացերու ընդարձակում, նոյնիսկ դպրոցներու փակում կամ վաճառք:*

*Կրթական ազգային քաղաքականութիւն մը, ազատագրուած սոֆվորամոլութեան կապանքներէն եւ արդի նշանակօսքերու հիւանդութենէն, նոր մօտեցումներու խիզախ կիրարկումով, մէջտեղ պէտք է բերէ նոր ու իրաւ հայ դպրոցը՝ շաղախն ու շաղկապը հայութեան, գիրին, հաւատքին, հայրենիքին»:*

*2. «Ածուն 21-րդ Դարուն»*

*Մ. Հայկենց այս բաժնին որպէս բնական ընտրած է մեր պատմահայր Մովսէս Խորենացիի այնքան յայտնի սա տողերը.*

*Գ«Զի թէպէտ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ... սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոց յիշատակի...» (Մովսէսի Խորենացւոյ «Պատմութիւն Հայոց» Ա. Գ., Վենետիկ, 1881):*

*Եթէ երբեք Մովսէս Խորենացի 5րդ դարուն այսպէս արժեւորած էր*

*Շար.ը էջ 19*

# ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆԻ ԱՐԱՐԱՅԻ ԳՐՈՀԸ

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*
*(Շարունակուած նախորդ թիւէն)*

*Թուրքիոյ նախագահ՝ Տէմիրէլ, Յորդանան կատարած կառավարական մի այցելութեան ժամանակ, խնդրել էր Պաղեստինի Նապլուս քաղաք այցելել, նրա մօտակայքում թաղուած թուրք զինուորների շիրիմներին յարգանքի տուրք մատուցելու: Հայ մամուլը այս տեղեկատուութիւնը հաղորդելու ժամանակ չէր յիշատակել, թէ այդ ի՞նչ շիրիմների այցելութեան մասին էր լուրը: Արժանի չէր, որ հայ կամ օտար ընթերցողները իմանային, որ այդ Արարայի (Նապլուս) բարձունքներին մղուած ճակատամարտում՝ հայ կամաւորների վրէժի կրակի նետերով խոցուած բագում թուրք զինուորների գերեզմաններն էին: Ափսոս որ հայ պատմաբանները դեռեւս ըստ արժանւոյն չեն ուսումնասիրել Արարայի ճակատամարտը, հայկական լեգէոնի սխրանքները, այն հայերի պատմութեան յիշատակութեան արժանի բազում քաջազարմ դրուագների հերոսամարտերից մէկն է:*

*Հայերի տեսլականն էր, դաշնակիցների յաղթանակից յետոյ հայկական Կիլիկիայում, Ֆրանսայի հովանաւորութեամբ, ինքնավար իշխանութիւն հաստատել, եւ գուցէ նորից գահին կանչէին Ֆրանսայում մահկանացած իրենց վերջին թագաւորի դեռեւս յարատեւող ժառանգներից մէկին: Դարձեալ պատմութեան չար նախախնամութեամբ, դաշնակից երկրների շահերը պահանջում էին իրենց երէկուայ զէնքի թշնամուն... սիրաշահել: Ինչ խոստումներ, դիւանագիտութիւնը խոստում չի ճանաչում, պիտի ցրէին իրենց իսկ կազմաւորած Հայկական լեգէոնը, այն լեգէոնը առանց որի պիտի չիրականանար Արարայի պաշտպանակ ամրութիւնների նուաճման զէնքի յաղթանակը: Ըստ այդ ռազմաճակատի ընդհանուր հրամանատար զօրավար՝ Ալէմպիի յետագայ վկայութեան, Արարան էր վճռել ամբողջ Միջին Արեւելքի ճակատագիրը: Տիրան ետ էր վերադարձել Մարսէյլ, իր սրտում ամբարած Մուսա Լեռցիների քաջութեան արթնած հայրենասիրութեան բոցավառ սէրը:*

*Արարայի յաղթական ճակատամարտը աւետել էր իրենց երազանքի իրականացման արշալոյսը: Հայկական լեգէոնը պիտի լինէր ապագայ Կիլիկեան պետութեան բանակի կորիզը, չէ որ 1916 թուականին Լոնտոնի ֆրանսական դեսպանատանը կայացած ժողովի պայմաններից էր եղել նաեւ, որ հայերը պիտի պատերազմէին թուրքի դէմ, ազատագրէին Կիլիկեան եւ այնտեղ ֆրանսական իշխանութեան հովանաւորութեան տակ հիմնադրուէր Կիլիկեայի ինքնավար իշխանութիւն: Հայկական լեգէոնը ֆրանսական բանակի հետ արշաւում էր դէպի Կիլիկիա, նրա դռները բացելու զէնքով, ողջունելու իրենց նախնիների թագաւորութեան աշխարհը եւ վերջապէս տեսնէին իրենց Կիլիկիան, ողջագուրուէին իրենց դիմաւորող ազնուազարմ թագաւորների ստուերների հետ:*

*Արարայի յաղթական գրոհը քայքայել, փլել էր Պաղեստինի թուրք-գերմանական ռազմաճակատը, անհամար զոհեր, իննսուն հազար ռազմագերիներ, կռիւը լքած բազում վախկոտ ասկեարների փախուստ: «Ցանկամ տեսնեմ զիմ Կիլիկիա» երգերի հրավառութեամբ իրականացրին երկու հարիւր յիսուն քիլոմեթր խանդավառ յաղթարշաւը: Ճանապարհին կարաւանների փշրանքների հետ սրտայոյզ հանդիպումներ, նրանց տառապահար դէմքերից ցոլացող վիշտ: Սակայն այդ փշուր հայերից նորից պիտի ճառագայթէր արմենական իմաստութեան լոյսը, այն նորից պիտի հրավառէր հայոց ոգու ջահերը: Ճանապարհին աւերեցին Սուլթան Համիտի Աքիայի բանտը, որտեղ աքսորուած ու նահատակուած էին եղել բազմաթիւ հայ ու այլ ժողովուրդների յեղափոխականներ:*

*1918 թուականի Հոկտեմբերից սկսեալ Հայկական Լէգէոնի կամաւորական ջոկատները յաղթական մուտք էին գործում Կիլիկիա, ծնկաչոք համբուրում հայերի խոնջանքի, երգի, աղօթքի շունչով յորդած հողն հայոց: Յաղթական կամաւոր զինուորներ, որոնք վճռել էին լինելու հայկական պետութեան բանակի կորիզը: Հայոց տառապանքի վիշտը ամոքելու համար կարծես երկինքից հրճուանքի կարմիր շողեր էին իջնում նրանց սրտերին, հայրենազրկուած բնիկները նորէն վերադառնում էին իրենց շէները, նորոգում իրենց բոյները, խորին հաւատքով լցւում դէպի գալիք անկախ իշխանութեան արեւագալի նոր արշալոյսը: Ալէմպիի կողմից գործուղուած գնդապետ՝ Պրէմոն ներկայանում էր որպէս «Հայաստանի ու Կիլիկիայի կառավարիչ, յայտարարում էր որ ինք երկիրն առժամեայ պիտի կառավարէր, ապա իշխանութիւնը պիտի փոխանցէր հայերին: Լէգէոնը տարածւում էր դէպի Կիլիկիայի քաղաքներ ու աւաններ: Ով երեւակայութեան թռիչքի կորով ունի, թող գոցի աչքերը, թող սաւառնի Կիլիկիայի երկինք եւ այնտեղ պիտի չհանդիպի՞ արդեօք Ֆրանսայի իր մատուռից այդտեղ հասած Լեւոն Վեցերորդին, գրկէ՛ք նրան, ողջագուրուէ՛ք նրա հետ, բոցավառուէ՛ք Կիլիկիայի վերանկախացման խրախճանքի խարոյկից ժայթքող աստղերով:*

*Պատմութեան ընթացքը, նախախնամութիւնը, թէ ինչը, մեր հազարամեակների յարատեւութեան ճանապարհին հարուածել են մեզ, ինչո՞ւ... արդեօ՞ք մենք ենք, չգիտեմ, սակայն երեւի...: Հայերի սիրելի կռունկների երամներն էին երգով տողանցում Կիլիկիայի երկնակամարում, ուրախ խապրիկներ պիտի տանէին պանդխտացած հայերին, որ դարձեալ իրենց երկինքի կապոյտին երգերի խինդ է ալիքուել, դարձեալ իրենց շէների ծխաններից ծուխ է գալարւում, դաշտերում ծաղկող ծառերին ծիածան է վառւում, մաճկալների հորովէլների կանչի ղօղանչներ են: Սակայն ռազմի դաշտում պարտուած թուրքիային՝ այդ հիւանդին, այդ հիւանդ հոգիով բարբարոս պետութեանը սիրաշահելու համար Ֆրանսայի ու Անգլիայի միջեւ պայքար էր մղւում:*

*Միայն մի քանի տարիներ հայերը ու նրանց լեգէոնի կամաւոր մարտիկները իրենց յաղթական պայքարի հրճուանքով արբեցան: Նոյն ֆրանսական սպաները, որոնք ականատեսն էին եղել կամաւորների սխրալի գրոհներին, կամայական վերաբերմունքի էին ենթարկում նրանց: Ֆրանսացի պետական այրերը, զինուորականները արդեօք տեղեակ չէի՞ն, որ այդ երկրամասում թագաւորել էր իրենց տոհմակից Լուսինեան Լեւոնը, որ այն հանգչում էր իրենց հողում եւ ինչո՞ւ չվերակենդանանար նրա իշխանութիւնը: Եւ ինչքա՜ն էին այդ շահերը հզօր, որ թշնամուն գիջեցին այն որ զէնքի ուժով էր նուաճուած, այն որ գրաւոր համաձայնագրով խոստացած էին իրենց դաշնակիցներին որպէս նրանց նախնիների իշխանութեան վերականգնում: Եւ ֆրանսական կառավարութիւնը, թուրքերի հետ 1920 թուականի Օգոստոսի տասին ստորագրած համաձայնագրով Կիլիկիան յանձնեցին՝ յոյների ու հայերի արիական արիւնով սրբապիղծ քեմալական Թուրքիային:*

*Զանսացին իրենց երկրի իմաստուն զաւակների եւ իրենց դաշնակից հայերի կոչերին: Վար իջաւ ֆրանսական յաղթական դրօշակի փառքի պատիւը, կարծես մարել էր մարդկային վեհ գաղափարների իրենց անցեալի պաշտամունքը: Ֆրանսական հրամանատարութիւնը սկսում էր զօրացրել Հայկական լեգէոնի կամաւորներին: Զգաստացրել էին իրենց շէները վերադարձած հայերը, այլեւս ոչ կարաւաններին, զէնք վերցնել, կռիւ տալու թշնամուն: Հայկական կուսակցութիւնները՝ Հնչակեան, Դաշնակցական, Ռամկավար, միասնաբար գլխաւորում էին պաշտպանական մարտերը: Կիլիկիայի բոլոր քաղաքները, Մուսա Լեռցիների հերոսական կռիւների ոգու ներշնչանքով կռուել եւան թշնամու դէմ, զարկին, զարնուեցին մարտի դաշտում, բայց ոչ երբեք ստրկանալ:*

*Ահա այս կռիւների մասին էին թրքական վարչապետարանի հրատարակած փաստաթղթերը: Ահա այս հայ զինուոր լեգէոնականներն էին թշնամու դէմ նորից մարտեր մղում, յարձակւում նրանց վրայ, զարկում նրանց ինքնապաշտպանական մարտերում, ով որ եկել էր սպաննելու, հայու սուրով ու զէնքով էր ընկնում: Այո, հայ զինուորը յարձակուեց նրանց բնակավայրերի, թաղերի վրայ, ահա այս կռիւ էր եւ ոչ թէ խաղաղ բնակչութեան վրայ բռնութիւննե:*

*Ինքնապաշտպանական մահու ու կենաց կռիւներ մղեցին Մարաշի, Հաճընի, Ուրֆայի, Ատանայի, Այնթապի, Զէյթունի, Ֆնըտըճաքի, Տէօրթ Եոլի, Մերսինի ու այլ բնակավայրերի զինուած հայերը՝ մասնակցութեամբ լեգէոնական կամաւորների: Հայեր ընկան մարտերում, քառապատիկ մահեր պատճառելով թշնամուն, այսպէս մարտերում զոհուել եւ յաղթապսակը ճակատին քայլել յաւերժութեան ճանապարհով: Ֆրանսացի զինուորը չմասնակցեց հայու մարտերին, երբեմն նոյնիսկ արգելակեց նրանց դիմադրութիւնը:*

*Կիլիկիայի ինքնապաշտպանական կռիւներում զառնուեցին Մուսա Լեռցի դիւցազուն լեգէոնականներ՝ Յակոբ Կրպոյեանը, Խաչեր Փանոսեանը եւ Մուսա Լերան քաջերից քաջերի մէկը՝ Պետրոս Տըմլաքեանը: Մուսա Լերան դիմացի բաց ծովում խարսխած Կիշէն ռազմանաւի հրամանատար Պրիտոնի պահանջով հերոսամարտի յայտնի դերակատարներէն՝ Տըմլաքեանը նաւ էր բարձրացել: Ֆրանսերէն լեզուին տիրապետելով, տեղեկութիւններ էր հաղորդել լերան մարտերի, թշնամու զօրքի տեղաշարժերի մասին եւ իր ցուցմունքների հիման վրայ ռազմանաւի թնդանօթները որոտացել էին ու կրակ տեղացել՝ Քէպուսիէի եկեղեցում ու նրա շրջակայքում ճամբար դրած թշնամու զօրքի վրայ, ո՜վ իմանար ինչքան զինուորներ էին այդ կրակներում այրուել: Ես, մանուկ տղեկ, տեսել եմ եկեղեցու ճակատային պատի մէջ խրուած այս ռումբերի բեկորներից մէկը, այն պահպանում էին որպէս յաղթանակի խորհրդանիշ: Պետրոսն էր եղել վեց «Գնուտախըլը» հրացանակիրներից մէկը, ռազմանաւի հրամանատարը նրան ու Եսայի Եաղուպեանին էր միայն թոյլ տուել յետագայում կրելու*

*Շար.ը էջ 19*

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ
ST. GREGORY ARMENIAN CHURCH
Geragos BANQUET HALL OF PASADENA
NEWLY REMODELED



Now ready to host your
• Wedding
• Baptism
• Anniversaries
• All other happy & sad events.
• Հարսանիք
• Մկրտութիւն
• Տարեդարձ
• Եւ ամէն ուրախ ու տխուր առիթներ:

ՎԱՀԷ 562-715-8730 VAHE

Լաւագոյն եւ յարմարագոյն գիներով ձեզ կ'սպասարկենք


MISSION
WINE & SPIRITS
HAPPY LABOR DAY!
PLEASE DRINK RESPONSIBLY
AMAZING SELECTION & EVERYDAY LOW PRICES!
facebook.com/missionliquor
Like Us On facebook
OPEN SUNDAYS!
GLENDALE STORE ONLY 10AM-4PM
twitter.com/missionliquor
REMY MARTIN VSOP COGNAC 750 ML 29.99
REMY MARTIN XO COGNAC 750 ML 99.99
FUSSIGNY XO COGNAC 750 ML 69.99
TSAR ALEXANDER I VSOP COGNAC 750 ML 18.99
BELUGA VODKA 750 ML 22.99
ARARAT NAIRI 20 YR BRANDY 750 ML 84.99
BACARDI RUM LIGHT OR GOLD 750 ML 8.99
ROBERTO CAVALLI VODKA 750 ML 24.99
CAZADORES TEQUILA REPOSADO OR SILVER 750 ML 19.99
CORRALEJO REPOSADO TEQUILA 750 ML 21.99
VAN GOGH VODKA 750 ML 16.99
DEWAR'S WHITE LABEL WHISKY 1.75 L 24.99
BALLANTINE'S FINEST WHISKY 1.75 L 15.99
1800 TEQUILA REPOSADO OR SILVER 750 ML 16.99
STOLICHNAYA VODKA 1.75 L 18.99
SKYY VODKA ALL FLAVORS 750 ML 9.49
PURITY VODKA 750 ML 22.99
KETTLE ONE VODKA 750 ML 17.99
Washington Blvd.
Glenoaks Blvd.
Burbank Blvd.
210 FWY
134 FWY
101 FWY
405 FWY
170 FWY
PASADENA 1785 E. WASHINGTON BLVD. 626-794-7026
GLENDALE 825 W. GLENOAKS BLVD. 818-242-0683
SHERMAN OAKS 13654 BURBANK BLVD. 818-785-6529
STORE HOURS: MON - SAT, 9AM-8PM. (GLENDALE STORE OPEN SUNDAY 10AM-4PM)
SOUTHERN CALIFORNIA'S PREMIER WINE & SPIRITS SUPERSTORE!
AD PRICES MAY REMAIN IN EFFECT LONGER THAN THE TIME PERIOD INDICATED. WE RESERVE THE RIGHT TO LIMIT QUANTITIES. SALES TAX EXCLUDED. PRICES SUBJECT TO CHANGE WITHOUT NOTICE. EXPIRATION DATE SEPTEMBER, 17TH, 2011.

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

# ՔԻՉ ՔՆԵԼՆ ԷԼ Է ՎՆԱՍ, ՇԱՏՆ ԷԼ

*Քնաբանները յորդորում են չափաւոր քնել*

*Մեր մայրիկներից շատերն իրենց փոքրիկներին քնեցնում են թեթեւ լուսաւորուած սենեակում, լուսամփոփ են միացնում սնոտիապաշտութիւնից ելնելով՝ իբր թէ «չարքեր» չգան երեխայի սենեակ: Իսկ այն մայրիկները, որոնք սնոտիապաշտ չեն, բայց նոյնպէս լուսամփոփ են միացնում, մտավախութիւն ունեն, որ փոքրիկները գիշերը կ՚արթնանան ու մթութիւնից կը վախենան: Այնինչ, մասնագէտները գտնում են, որ լուսամփոփ միացնելը վտանգաւոր է երեխայի առողջութեանը: Պարզւում է, որ լուսամփոփի կիսամռայլ լոյսը կարող է վատագոյնս ազդել երեխայի գլխուղեղի կառուցուածքի եւ քիմիական բալանսի վրայ: Ամերիկեան նեարդաբանները յայտնաբերել են, որ այն մարդիկ, որոնք քնում են, այսպէս ասած, գորշ լուսաւորութեան ներքոյ, ինչպէս լուսամփոփների կամ հեռուստացոյցի լոյսերն են, ժամանակի ընթացքում դեպրեսիւ են դառնում: Ըստ մասնագէտների կատարած հետազօտութիւնների արդիւնքի, նմանատիպ լոյսերը խանգարում են մելատոնին հորմոնի արտադրութեանը, որը մարդու օրգանիզմին յուշում է, որ գիշեր է եւ քնելու ժամն է: Այսինքն՝ տեւական ժամանակ թեթեւ լուսաւորուած սենեակում քնելով, խանգարւում է մարդու նեարդային համակարգը եւ դեպրեսիա է առաջանում: Բացի այս, գիտնականները որոշ ժամանակ փորձեր են կատարել մկների վրայ եւ պարզել, որ ոչ լիարժէք մթութեան մէջ քնած կենդանիները դարձել են ընկճուած եւ սկսել են արագ գիրանալ: Այսինքն՝ այն, ինչ կատարուել է մկների հետ, կատարւում է նաեւ մարդկանց հետ: Այնպէս որ, առողջ լինելու, հանգստանալու եւ չգիրանալու համար անհրաժեշտ է քնել լիարժէք մթութեան մէջ, որքան էլ ձեզ համար սահմռկեցուցիչ է «խաւարը»:*

*Տեղական մասնագէտներն էլ կոչ են անում քնել շատ մութ սենեակում, իսկ ննջարանի վարագոյրներ ընտրելիս նախապատուութիւնը տալ ոչ թափանցիկներին, որոնք չեն թողնի, որ լոյս թափանցի սենեակ: «Առաւօտ» հետ զրոյցում կանխարգելիչ սրտաբանութեան կենտրոնի քնաբան Աիդա Մաթեւոսեանի խօսքերով՝ «Խորհուրդ չի տրւում լոյսի ներքոյ քնել, քանի որ օրգանիզմում արտադրվող հորմոնների ցիկլայնութիւնը խանգարւում է, որը յանգեցնում է քնի որակի վատացմանը»: Ըստ բժշկի, դեպրեսիան կարող է բերել անքնութեան եւ հակառակը: Անքնութեան առաջին պատճառներից են ընկճուածութիւնը, մտահոգութիւնները: Մասնագէտի խօսքերով՝ մարդիկ չեն էլ հասկանում, որ դեպրեսիա է սկսւում, մինչեւ դանակը ոսկորին չի հասնում. «Մինչեւ հիւանդութիւնը գագաթնակէտին չի հասնում, չեն դիմում բժշկի»: Մեր այն հարցին, թէ կարո՞ղ է անքնութիւնն ազդել պոտենցիայի վրայ, Ա. Մաթեւոսեանը վստահեցրեց, որ անքնութիւնն ազդում է հոգեկանի վրայ, որն էլ իր հերթին կարող է ազդել պոտենցիայի վրայ: Բացի այս, շատերը անհանգիստ քնելով կամ քնի մէջ խռմփացնելով չեն էլ գիտակցում, որ դա լուրջ հիւանդութեան նշան է: Բժշկի ներկայացմամբ՝ «Շատ տարածուած է ապնոէ-հիպոկնոէ համախտանիշը: Այս հիւանդութեան ժամանակ քնած մարդու մօտ կամ մասնակի, կամ լրիւ փակւում են շնչառական ուղիները, որի ընթացքում թթուածնային քաղցի մէջ է ընկնում օրգանիզմը, ու մարդը չի կարողանում խորը քնել: Սա էլ յանգեցնում է նիւթափոխանակային տարբեր խանգարումների, մարդիկ գիշերը խռմփացնում են եւ այլն: Առաջին հերթին այս հիւանդութիւնը բերում է պոտենցիայի անկման: Ապացուցուած է, որ բուժումից յետոյ սեռական ակտիւացում է սկսւում»:*

*Իսկ թէ որքան պէտք է քնի մարդը, որպէսզի առողջ լինի՝ մեր հարցին մասնագէտը պատասխանեց, որ դա կախուած է օրգանիզմի պահանջից եւ տարիքից: Սակայն չափազանց երկար կամ կարճ քնելն էլ լուրջ վտանգներ է ներկայացնում: Օրինակ՝ եթէ դուք մշտապէս 7 ժամից պակաս էք քնում, ապա ձեզ սպառնում են սրտանօթային հիւանդութիւնները, հիպերտոնիան, շաքարախտն ու անհամաչափ գիրութիւնը: Մասնագէտների կարծիքով, քնի ժամանակահատուածը կախուած է անձի տարիքից. որքան մեծանում է մարդը, այնքան նրա քնի ժամանակը կարճանում է: Այսպէս՝ նորածինները քնում են 20-22 ժամ, իսկ 6 ամսականից մինչեւ 3 տարեկան երեխաները պէտք է քնեն 14 ժամ: Արդէն 17 տարեկանից սկսած՝ 8 ժամն էլ բաւական է, որպէսզի մարդն իրեն առոյգ զգայ: Գոյութիւն ունի, այսպէս ասած, ութնեակի սկզբունքը՝ հասուն մարդը առողջութիւնը պահպանելու համար պէտք է աշխատի 8 ժամ, քնի նոյնպէս 8 ժամ եւ վերջապէս հանգստանայ կրկին 8 ժամ: Որոշ մասնագէտներ նաեւ գտնում են, որ չափից շատ կամ չափից քիչ քնելու արդիւնքում մեծանում է վաղաժամ մահացութեան ռիսկը, այսինքն, եթէ տեւական ժամանակ չափազանց քիչ կամ շատ քնէք, ապա առաջիկա 15 տարում մահանալու ռիսկը 2 անգամ աւելանում է: Այնպէս որ, որպէսզի ժամանակից շուտ «յաւերժ քուն չմտնէք»՝ մահճակալի կողքին զարթուցիչ դրէք, որը ձեզ ճիշտ ժամին կ՚արթնացնի:*

*Ջնայած գիտնականների կողմից սահմանուած ժամկէտներին, նրանք նաեւ փաստում են, որ մարդու քնելու տեւողութիւնը կախուած է նրա օրգանիզմի առանձնայատկութիւններից, նիւթափոխանակութիւնից եւ ապրելաոճից, անգամ եղանակից:*

# ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԱՐԵՒԱՅԻՆ ԱՅՐՈՒԱԾՔՆԵՐԸ ՑԱՒՈՏ

*Բրիտանացի գիտնականները գտել են այն քիմիական միացութիւնը, որը կը բերի ցաւազրկողների նոր սերնդի ստեղծմանը: Ուսումնասիրութեան հիմքում ընկած է ուլտրամանուշակագոյն ճառագայթների ազդեցութեան ուսումնասիրութիւնը մարդու մաշկի վրայ:*

*Լոնտոնի թագաւորական քոլեջի գիտնականները 10 կամաւորների վրայ անցկացրել են փորձարկում: Նրանք կամաւորների մաշկի մի փոքր հատուած ենթարկում էին B կարգի ուլտրամանուշակագոյն ճառագայթների ազդեցութեանը, որն ազդում է մաշկի վերին շերտի վրայ ու հանդիսանում է արեւային այրուածքների հիմնական պատճառ:*

*Այնուհետեւ գիտնականները վերցրել են այրուած մաշկի նմուշներ ու ստուգել են ցաւ առաջացնող հարիւրաւոր մոլեկուլների առկայութիւնը: Արդիւնքում նրանք բացայայտեցին, որ նմուշների մէջ առկայ էր CXCL5 մոլեկուլների բարձր մակարդակ:*

*Այսպիսով, առաջին անգամ հաստատուեց այս մոլեկուլի կապը ուլտրամանուշակագոյն ճառագայթների հետ: Գիտնականները յուսով են, որ մի օր այս բացայայտումը թոյլ կը տայ ստեղծել դեղամիջոցներ, որոնք կ՚օգնեն արթրիտ, ցիստիտ եւ քրոնիկ հիւանդութիւններ ունեցող մարդկանց:*

# «ՓՆՏՌՈՒՄ ԵՄ ԻՄ ՀԻՆ ԵՐԵՒԱՆԸ»

Շարունակուածէջ 7-էն

*րանը, հայկական մակապարտեզ: Երեւանում լինում է մի քանի ամիս: Ասում է՝ կարօտում է Երեւանը, նախկին մթնոլորտը, մարդկային յարաբերութիւնները:*

*«Փնտռում եմ իմ հին Երեւանը: Այսօրուայ Երեւանում օդ, կանաչ տարածութիւն չկայ: Ի՞նչ եղան մեր այգիներն ու պուրակները: Պէտք է քաղաքը մեծացնէին, ոչ թէ խեղդէին նորակառոյց շէնքերով, որոնց 90%-ը դատարկ է: Օպերան խեղդել են: Ես ատում եմ Հիւսիսային պողոտան, որովհետեւ ուզում եմ, որ իմ օպերայի շէնքը իր ողջ շքեղութեամբ երեւայ: Վերջերս վերադարձայ Թուրքիայից: Կարսում սեւ տուֆից հայկական շէնքերը պահպանուել էին, տպաւորութիւն էր, թէ Գիւմրիում եմ: Այդ ինչո՞ւ Թուրքիան այդքան գիտակցութիւն ունի, որ հին շէնքը պէտք է պահպանել, իսկ մենք՝ ոչ: Այնպիսի շէնքեր ենք քանդում, որի իրաւունքը չունենք: Այսօր Երեւանում ոչ մի հին շէնք չես գտնի: Դրանց փոխարէն վեր են խոյանում բարձրայարկ նորակառոյցները», ասում է կոմպոզիտորը:*

*«Վերադառնալ աւանդոյթներին», խորհուրդ է տալիս մաեստրոն: Նա ցաւով փաստում է, որ կորցրել ենք ազգային արժէքներն ու նկարագիրը, հանապազօրեայ հացի կռիւը մեզ դիմազրկել է: «Նախկինում չէինք կարող առատ սեղանի շուրջ հիւրեր ընդունել, երբ գիտէինք, որ հարեւան բնակարանում հաց չկայ: Մենք մեզ նման բան թոյլ չէինք տալիս: Սով էլ եմ տեսել, աղքատութիւն: Մայրս պատերազմի տարիներին ճաշարանում էր աշխատում եւ գաղտնի դռնով հարեւաններին ճաշ էր ուղարկում: Այսօր նման բան չկայ: Տեսել եմ, թէ ինչպէս մարդիկ՝ երեսը ծածկած, աղբի մէջ քուջուջ են անում, մի կտոր հաց գտնելու համար: Անցէք Մաշտոցի պողոտայով ու հաշուէք, թէ քանի մուրացկան կայ: Ինձ սարսափեցնում է ամէն օր աւելի անհագնացող արտագաղթի պատկերը: Մարդ չկայ քաղաքում, ով էլ կայ՝ դրամ չունի: Տարիներ առաջ Կազիրյոկը մտաւորականների ամենասիրելի վայրն է: Երեկոյեան հաւաքւում էինք, սուրճ խմում, զրոյցում-քննարկում: Հիմա ոչ ոք չկայ: Վերջերս գնացի Կազիրիոկ, ուզում էի կենդանացնել յիշողութիւններս, բայց ոչ մի մտաւորական չայցելեց: Կազիրիոկը նոյնն է, Հռիփսիկի սուրճն էլ նոյն համն ունի, ուղղակի մտաւորականի ձեռքին գումար չկայ: Նրանք ի վիճակի չեն իրենց թոյլ տալ երեկոյեան մէկ բաժակ սուրճ խմել դրսում»:*

*«Իմ ստեղծագործական աշխարհի միտքն ու անուանումը երկու բառով եմ վերնագրել՝ հայրենիք եւ սէր: Առանց սիրոյ հայրենիք չի լինի: Սիրել մարդուն, երկիրը, բնութիւնը, սիրած աղջկան: Ես սիրում եմ մեկին բազմաթիւ անգամ: Արուեստագէտը ներշնչանքի կարիք ունի: Շատ տարիներ առաջ կարդացի «Ափ մը հող» բանաստեղծութիւնը, խենթացայ ու գրեցի երաժշտութիւն: Այդ արտայայտութիւնը դարձաւ իմ հաւատամքը: Աշխարհի որ ծայրում էլ որ լինեմ, կը ցանկանամ, որ ափ մը հող լինի Հայաստանից:*

*Կեանքիս ամենամեծ ձեռքբերումը, իմ ամենամեծ երջանկութիւնն իմ ընտանիքն է: Իմ ստեղծագործական խոյանքներին յագուրդ տալը», ասում է Անասեանը:*

*«Հայաստանից տանում եմ թախիծ: Գնում եմ, բայց սիրտս թողնում եմ այստեղ: Զգում եմ, որ կարող էի աւելին անել, եթէ ինձ հնարաւորութիւն տային: Կիսուած եմ ապրում: Մի կէսս Հայաստանում է, միւսը՝ ԱՄՆ-ում: Հայաստանը յիշողութիւնից հանել չի ստացւում: Հողը միշտ կանչում է ինձ, մի տեսակ ուժ եմ ստանում այստեղ գալուց: Դա ինձ անհրաժեշտ է», ասում մաեստրոն:*

*Հոկտեմբերին մէկ ամսով Հենրիկ Անասեանը կը մեկնի Հարաւային Ամերիկա՝ ղեկավարելու Արա Գէորգեանի համերգներն այնտեղ, կազմակերպութեամբ տեղի ՀԲԸ-Միութեան: Հայաստան կ՚այցելի միւս տարի՝ այստեղ նշելու իր 75-ամեայ յոբելեանը:*

ՎԱՐՁՈՒ
ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌՕՐԵԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐՈՒ ԱՌԱՋ

*Շարունակուած էջ 1-էն*

խարիի չորս ծագերուն: Յարգելի զեկուցաբերը, ուստի, կ'առաջարկէր որդեգրել ազգային նոր գործելաոճ, ստանձնել նոր յանձնառութիւններ, եւ ընթացք տալ ազգային արդիական նոր ծրագիրներու, անող հայ նոր սերունդներու առջեւ բերուն, արդիւնաշատ եւ հայութեան օգտակար կեանքի այնպիսի ասպարէզներ որոնք, ի մէջ այլոց, լաւագոյնս պիտի կարենային ծանօթացնել հայ ժողովուրդը եւ անոր արդար դատը միջազգային հանրային կարծիքին եւ պետական աւագանիներուն:

Նոր ծրագիրներու առաջին շարքին կը գտնուէր առաւելագոյնս նիւթական արժէքներու կարեւորումը: Պէտք է օգնութիւն փութացնել, կրթաթոշակ յատկացնել բացառաբար մեր համալսարանական այն ուսանողներուն միայն, որոնք պիտի ընտրեն քաղաքական, դիւանագիտական, տնտեսագիտական, արդիւնաբերական , առեւտրական եւ նման բնոյթի ուսումնական ճիւղերը: Անոնց՝ որոնք, յետագային պիտի բարձրանան քաղաքական, դիւանագիտական, տնտեսագիտական, արդիւնաբերական, առեւտրական թատերաբեմ: Քաղաքական հմտութիւններն ու նիւթական հսկայ կարելիութիւններ են պէտք մեր ժողովուրդին: Անոնք են, որ պիտի օգնեն մեր ուսումնական նոր սերունդներուն, որ կարենան մշակել բարեկամութիւններ քաղաքական եւ պետական անձնաւորութիւններու հետ: Պիտի ընդարձակեն իրենց կապերը անոնց հետ: Բարձրօրէն պիտի վարկաւորեն մեր ժողովուրդը անոնց մօտ եւ նաեւ նամբայ պիտի հարթեն դէպի մեր պահանջատիրութեան արդար լուծումը:

Նոր մարտահրաւէրներու վերլուծման նամբուն՝ մեր յարգելի զեկուցաբերը, անգամ լուսանցքային սիւնակին վրայ՝ յիշատակում մը չէր արձանագրեր մեր ազգը, ազգ պահող հայ լեզուի եւ հայ տառին մասին: Ան կ'անտեսէր հայ գրականութեան, հայ մատենագրութեան եւ հայոց պատմութեան կարեւորութիւնը: Կը շրջանցէր հոգէ-մտաւոր հարստութիւններու պահպանման, զարգացման եւ աշխարհով մէկ ընդհանրացման օգնող կարելիութիւնները: Ի՞նչ բանի էր պէտք Շիրազը ընթերցելը: Ինչ էր օգտակարութիւնը Զարենցի, Սեւակի, Թումանեանի, Վարուժանի, Սիամանթոյի եւ բոլոր, բոլոր՝ մեր մշակոյթի տիտաններու ստեղծագործական գործերը կարենալ ըմբոշխնելու, անոնցմով ներշնչուելու եւ զօրանալու բարոյական նպաստը միջազգային քաղաքական թատերաբեմի վրայ ուր պահանջուածը լոկ նիւթական արժէքներն էին: Անոնցմով խանդավառուիլը, հպարտանալը, կարն՝ մեր հարուստ մշակոյթը աշխարհին ծանօթացնելը եւ անոր համակրանքը շահիլը ինչով կարելի պիտի նիւթական արժէքներու վրայ հաստատուած աշխարհա-քաղաքական հզօր պետութիւններու ուշադրութիւնը հրաւիրել հայ ժողովուրդի վրայ: Այդ օր, հայ ժողովուրդի բարոյական, մարդկային եւ ստեղծագործական արժէքները պարզապէս կ'անգիտակցուէին նորարարական ինքնաբաւարարուածութեամբ մը պարզապէս կարենալ ըսելու համար, թէ լեզուն կարեւոր չէ հայ մնալու համար:

Այդ հաւաքէն դուրս ելանք մտահոգ, ընկճուած, ընդվզած: Ազգային բարեսիրական միութեան մը վարիչէ մը կ'ակնկալուէր ամէն բանէ վեր դասել հայոց լեզուն, աշխատիլ անոր տարածումին եւ անբողջական տիրապետութեան համար:

Մենք բնաւ չենք ստորագնահատած, վարկաբեկած, քննադատած՝ ֆրանսահայ ըլլայ թէ ամերիկահայ, թրքահայ ըլլայ թէ յունահայ, ռումինահայ թէ ռուսահայ՝ հին կամ նոր սերունդէն որեւէ հայ մարդ, որ տարաշխարհի դժբախտ պարագաներու բերումով հայերէն չէր կրցած սորվիլ: Եւ ինչու՞ վերապահ տրամադրուիլ անոնց հանդէպ: Շատ Պարագաներ կը վկայեն, թէ անոնք ուրախ չեն իրենց այդ վիճակէն: Ինչ ալ ըլլան երեւոյթները՝ մենք երբեք չենք կասկածած անոնց անբասիր հայութեան, ջերմ հայասիրութեան եւ խորը հայրենասիրութեան: Համոզուած ենք ու կը հաւատանք որ ժողովուրդներու գոյութեան պահպանման հիմնական օղակը կը կազմէ իր լեզուն:

Մենք միշտ խանդավառուած ենք մեր համալսարանականներով: Շեշտուած է մեր ուրախութիւնը երբ տեսած ենք, որ անոնց մէջ մեծ է թիւը քաղաքական, դիւանագիտական, տնտեսագիտական, առեւտրական եւ նման բնոյթի ասպարէզներու հետեւողներուն: Նոյն խանդավառութիւնը կ'ունենանք ի տես մեր արժանաւոր համալսարանականներուն, որոնք կ'ընտրեն ազատ մասնագիտական ճիւղեր: Կը բազմապատկուի մեր ուրախութիւնը, երբ կ'ողջունենք անոնց մէջ հայ ուսանողներ, որոնք իրենց կեանքի ասպարէզ կ'ընտրեն լեզուագիտական, ստեղծագործական, գրականագիտական, գեղարուեստական, հայագիտական, պատմագիտական եւ ուսուցչական ասպարէզներ: Անոնք պիտի դառնան կոչումով նուիրեալներ, որոնք պիտի գան պատրաստել մեր վաղուան հայօրէն ապրող նոր սերունդներ:

Չի մեղանչենք մեր ոսկեղնիկ լեզուին դէմ: Հեռու մնանք նորարար պիտակի տակ թագնուած եւ իմաստէ զուրկ անպէտք վէճերէ, որոնք ոչ մէկ շահեկանութիւն կը ներկայացնեն: Հիմնականը՝ չուրանանք հազարամեակներ հայը հայ՝ հայրենիքը հայրենիք պահած՝ մեր ժողովուրդին ազգային ինքնութիւն ու իւրայատուկ դիմագիծ պարգեւած հայոց լեզուն: Նոր չէ որ պիտի հաստատենք մեր համոզումի անվիճելիութիւնը: Մինչ, Հայ են մեզի համար բոլոր անոնք, որոնք մայր հողէն հեռու, հայախօս կամ ոչ՝ հայ կը զգան իրենք զիրենք, կը սիրեն եւ բարձր կը գնահատեն իրենց ազգն ու հայրենիքը: Իսկ լեզուն սորվիլը եւ խօսիլը մարտահրաւէրային քիչ մը երկար կամ կարճ, ժամանակի կարօտող գործընթաց մըն է:

## ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

*Շարունակուած էջ 2-էն*

*արեցին երկխօսութիւնը կասեցնելու համար:*

*Հիմա հարցին նայենք ընդդիմութեան տեսանկիւնից: Իշխանութիւնների հետ երկխօսութիւն սկսելով՝ Կոնգրէսը ցոյց տուեց, որ հաւատում է բանակցութիւնների միջոցով իշխանափոխութեան հասնելու հնարաւորութեանը: Աւելին. այդ ընթացքում հրաւիրուած մի քանի հանրահաւաքները ցոյց տուեցին, որ Կոնգրէսի համակիրների մի զգալի մասը նոյնպէս հաւատում է այդ հնարաւորութեանը: Այդ իմաստով, ի դէպ, վերջին զարգացումները դրական էին, որովհետեւ իշխանութիւնների գործելակերպը վերջնականապէս պարզ դարձաւ. Նրանք չեն փոխուել: Բայց դա, մեծ հաշուով, ոչինչ չի փոխում: Եթէ օրինակ, մէկն իր առջեւ նպատակ է դրել ջարդել ընկոյզը եւ փորձում է անել դա սովորական ջարդիչով ու չի կարողանում, դա դեռ չի նշանակում, թէ պիտի հրաժարուի ընկոյզ ջարդելու նպատակից: Դա ընդամէնը նշանակում է, որ պիտի ջարդիչը մի կողմ դնի եւ վերցնի մուրճը: Հիմա եթէ Կոնգրէսին չյաջողուեց բանակցութիւնների միջոցով հասնել իշխանափոխութեան, մնում է հանրահաւաքային ակտիւ պայքարի ճանապարհը, որովհետեւ նպատակը չի փոխուել: Այս իրավիճակն, ի դէպ, միանգամայն կանխատեսելի էր, բայց դա ոչինչ չի նշանակում. ցանկացած բժիշկ պարտաւոր է վիրահատելուց առաջ նախ փորձել դեղամիջոցներով բուժել, եթէ չյաջողուի՝ նոր միայն դիմել վիրահատական միջամտութեան: Այնպէս որ՝ իրականում ամէն ինչ ընթանում է «ըստ ժամանակացոյցի». իշխանութիւնները պիտի մինչեւ Սեպտեմբեր վերջնական պատասխան տային, եւ նրանք տուեցին այդ պատասխանը: Ու չզարմանաք, եթէ յանկարծ մէկ-երկու հանրահաւաքից յետոյ իշխանութիւնները տանգոյի փոխարէն սկսեն «Մեռնող կարապի պարը» պարել:*

***«ԶՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»***

***ՊՐ. ՌԱՖԻ ԷԼՔԱՏՏՈՒՄ ԸՆԴ ՕՐ. ՌԻԹԱ ԱՋԱՊԱՀԵԱՆ***

*Ամուսնացեալք*

*28 Օգոստոս, 2011 Փասատինա*

*Մեր ջերմ շնորհաւորութիւնները ամուսնացեալք զոյգին, անոնց ընտանեկան պարագաներուն եւ յատկապէս Տէր եւ Տիկ. Ընկ. Վահէ եւ Մարօ Աջապահեաններուն:*


**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680**

**F: (626) 797-6863**

**massis2@earthlink.net**


**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O.
1060 N. ALLEN AVE.
PASADENA, CA 91104


# Burbank Airport

## Bid Request General Contractors

**Qualified "A", licensed Contractors are invited to submit sealed bids by 2:05 PM, September 28, 2011 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority for Project Number E11-15, Fiber Optic and Service Equipment project. The Work in general consists of, but is not limited to, continuation of fiber optic path from Building 36 along the AOA and terminating at Hangar 1A. Includes all conduit, environmental enclosures, electrical components (including conduit and conductors) to energize enclosures, concrete pads and bollards for a fully complete system as described in the plans and specifications. Fiber optic cable installation is included as an additive alternate. Plans and specifications can be obtained directly from the Bob Hope Airport Web site at bobhopeairport.com under Business Opportunities. All bidders shall register with the Airport Engineering Department either via website or in person. Bids submitted by firms that have not registered with Airport Engineering will be deemed non-responsive and will not be considered. Call Bobbi Greenspahn at (818) 565-1305 for more information. A pre-bid conference (although not mandatory, we strongly encourage bidders to attend due to the difficult nature of the existing site conditions), will be conducted on September 14, 2011, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Office, 2800 Clybourn, Burbank, California, 91505. Located at the corner of Sherman Way and Clybourn.**

**INVITATION FOR BIDS (IFB) NO. 1712 ENVIRONMENTAL ABATEMENT SERVICES**

**The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for Environmental Abatement Services. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org under "Doing Business with HACLA", then click on "Procurement Opportunities" and click "Construction Goods and Services". Bids will be accepted at 2600 Wilshire Blvd, #3100, Los Angeles, CA 90057 until 10:00 a.m. (local time), September 16, 2011.**

9/1, 9/8/11
CNS-2160339#
MASSIS WEEKLY

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



ԵՂԻՍԱԲԵԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ

*ԵՂԻՍԱԲԵԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆԻ, մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ յաւարտ Ս. Պատարագի, Կիրակի, 4 Սեպտեմբեր, 2011ին:*

*Սգակիրներ՝*

*Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Ալիս Գարաօղլանեան:*

*Զաւակները՝*

*Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրօղլեան:*

*Տէր եւ Տիկ. Թադէոս եւ Նորա Քէօրօղլեան:*

*Թոռները՝*

*Տէր եւ Տիկ. Մայք եւ Մարալ Պօյաճեան (Լիբանան)*

*Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սիլվա Ճիլգէորգեան*

*Ժաք Գարաօղլանեան եւ Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Լիզա Քիւրքճեան*

*Տէր եւ Տիկ. Փիէռ եւ Նաթալի Քէօրօղլեան*

*Փիթըր Քէօրօղլեան*

*Արթըր Քէօրօղլեան*

*Ռաֆֆի Քէօրօղլեան*

*Ծոռերը՝*

*Քրիստ, Ռազմիկ, Ռիթա, Սաղօ, Կրէյս, Տէնիըլ, Մաթիւ, Սթիվըն, Մայքըլ եւ Քրիսթինա:*

*Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*«Մասիս» Շաբաթաթերթին ու ԵՂԻՍԱԲԷԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆԻ հարազատները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններով իրենց վշտակցութիւնը յայտնեցին հանգուցեալի ընտանեկան պարագաներուն:*

| | |
|---|---|
| Տէր եւ Տիկ. Վահէ եւ Ֆլորա Տիրացուեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ճօն եւ Ժանէթ Մելքոնեան | $100 |
| Տիար Ռաֆֆի Վարժապետեան | $50 |
| Ատրիան եւ Լիլիան Սաղրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Սեդրակ Աճէմեան | $200 |
| Եափուճեան ընտանիք | $200 |
| Տէր եւ Տիկ. Նշան եւ Ալիսիա Պասմաճեան | $75 |
| Տիկ. Սառա Սաղրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզիկ Տէր Դաւիթեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր Խոտանեան | $100 |
| Տիկ. Յասմիկ Մինասեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Վարդիվառ Կարկուտեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յովէլ եւ Անի Սարգիսեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Կարօ Աճէմեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տէփոյեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Մայք եւ Անի Նազաշեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Շահէ Կիրակոսեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Կարօ եւ Ատրինէ Թորոյեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ Խաչերեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Թամար Պէզճեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Անի Յակոբեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Աւետիս Սեմերճեան | $50 |
| Տիար Ճորճ Թաւուքճեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Կարօ Գրիգորեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ասատուր եւ Սօսի Նորիքեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Նորայր եւ Մէրի Խաչատուրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ս.Դ.Հ.Կ.ի «Արսէն Կիտուր» մասնաճիւղ | $200 |
| Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Լենա Խոտանեան | $100 |
| Ս. Գրիգոր Հայց. Առաք. Եկեղեցւոյ Եղբայրակցութիւն | $200 |
| Տիկ. Մարի Պօյաճեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Սրբուհի Քիւրքճեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Ժենիա Քէշիշեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Ազատուհի Մութաֆեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վահէ Աջապահեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն Գալթաքճեան | $250 |
| Ս.Դ.Հ.Կ.ի Լուիզիանայի «Ժիրայր Մուրատ» մասնաճիւղ | $250 |
| Տիար Յովհաննէս Պալայեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան | $100 |

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆԻ ԱՐԱՐԱՅԻ ԳՐՈՀԸ

*Շարունակուած էջ 15-էն*

*այդ զէնքերը: Ակնաբոյժ Ճէպէճեանի անձնական ջանքերի շնորհիւ Եաղուպեանի «Գունտախըլի» զէնքի առանձին կազմածները փոխադրուել էին Հայաստան եւ ամբողջացուելով Թանգարանի ցուցանմուշ դարձել, երկար նայել եմ նրա փողին, ինչքան կրակ է պայթել նրանից եւ թշնամու ինչքան հոգիներ խաւարել: Ըստ հօրս՝ Կապորալ Արմենակի հաղորդման, խրամատում իր կողքին էր զարնուել Պետրոսը, ճակատին դիպած թշնամու նշանառուի գնդակից:*

*Յաղթական հայկական լեգէոնի մուտքը Կիլիկիա, այնտեղ ինքնավար իշխանութեան վերականգման յոյսը՝ խանդավառ հրավառութիւն էր ստեղծել: Կարծում էին հայոց երկնակամարին նորից կապոյտ լոյս էր իջել, արեգակի արծաթափայլ նոր արշալոյս էր ծագել հայոց ոստաններին: Զէ, այնտեղ, հեռու Եւրոպաներում իրենց դաշնակիցները նոր դաւեր էին դարբնում, փորձում սիրաշահել պարտուած Թուրքին: Դաշնակիցները, Սեւրում պատառոտել էին նրա քարտէսը, Թուրքի ստորագրութեամբ հանդերձ դաշնագրել էին վերադարձնելու հայերին, յոյներին, քուրտերին, արաբներին այն, ինչ որ զաւթել էին իրենցից: Կանխելու համար այդ նոր դարբնուող դաւադրութիւնը եւ դաշնակիցներին կատարուած իրողութեան առաջ դնելու համար, Կիլիկիայի հայերը եւ միւս քրիստոնեայ համայնքները հանրագրութիւն էին ուղարկել Փարիզ, որ Կիլիկիան հռչակում էր անկախ հանրապետութիւն: Պօղոս Նուպար Փաշայի կողմից գործուղուած պատուիրակ՝ Միհրան Տամատեանի վարչապետութեամբ կազմուել էր հայկական աւանդական երեք կուսակցութիւնների համաձայնողական կառավարութիւն: Նոյն ինքն գնդապետ Պրեմոն, որ յայտարարել էր թէ իրենց հովանաւորութեամբ Կիլիկիան անկախ իշխանութիւն պիտի հռչակուէր, նոյն օրը սուինաւոր ափրիկացի զինուորների ուղեկցութեամբ փութացել էր կառավարական շէնք եւ սպառնալիքներով դուրս հրաւիրել կառավարութեան անդամներին:*

*Հայոց պատմութեան մատեանում շանթի լոյսի փայլատակում, դէպի աստղերը սլացող հրթիռի հրավառութիւն եղաւ Կիլիկիայի անկախ իշխանութեան հռչակումը: Սակայն այն մնաց միայն լոյսի շող, հայերի հոգիներում լոյսի հրացոլք, այն նոր երջանկութեան արեւը ասուպի նման շիջեց: Ինչքան յոյսեր են մարել այս արիական ցեղի հոգիներում, ինչու եւ ինչու չկարողացանք մեր նահապետ Հայկի մեզ ժառանգած հողը պահպանել: Եւ ինչու ասպետական Ֆրանսան մարեց այդ նոր ծագող արեւը, չէ որ իրենց նախնիների ժառանգների լոյսը նաեւ պիտի վառուէր այդ երկրի պալատին ծածանող դրօշին:*

*Եթէ այդ ռազմանաւերը, աստուածային սիրոյ ու կարեկցանքի շունչով յորդած հրամանատարը չլինէին, գուցէ ես ու բազում լեռնականների ժառանգներ արեգակի լոյսով, նրա ծիածանի փայլի հմայքով չէինք վառուի: Մարդկութեան վեհ գաղափարներ արարող որդիների ասպետական Ֆրանսա, դու էլ արդեօք չէի՞ր փառաւորուի քու նախնիների ժառանգների Թագաւորած երկրի վրայ անկախութեան լոյսի հրավառութիւնից:*

## Մ. ՀԱՅԿԵՆՑԻ ՄԻՆՉԵՒ ԴՐԱՇԽՏԸ ԵՒ ԱՆԴԻՆ ԳԻՐՔԸ

*Շարունակուած էջ 14-էն*

*հայրենիքն ու ժողովուրդը, Հայկենց 21-րդ դարու ԱԾՈՒՆ լուսարձակի տակ բերելով ու իր տեսողութեան ոսպնեակէն անցնելով ազգը յուզող 12 նիւթերու գրութիւններով արժեւորած է զայն:*

*Գաղափար մը կազմելու համար այս գրութիւններուն մասին տամ ոմանց բովանդակութեանց նիւթերը:*

*1. Հայ լեզու, հայ դպրոց, հայ թերթ, հայ եկեղեցի թեմաներուն նշանակութեանց մասին:*

*2. Հայ գրողներու մռայլ ապագան:*

*3. Նորեկ Ամերիկա եկողի մը փորձառութեան պատմութենէն էջ մը:*

*4. Փորձ մը առանց «դիսկուցիայի» կամ « դիսերտացիայի», երկու էջանոց տրամայով մը հրամցուած Հայաստանի երեք հանրապետութեանց պատմութիւնը:*

*5. Թէ ինչպէս Հայկենց հեգնականկատակերգական լեզուով մը կը մերժէ տասը հազար տոլարի առաջարկ մը գրելու համար «Ո՞վ է ղեկավար» նիւթին մասին:*

*« Ոչ միլիոն տոլարի ալ չեմ գրեր*

*Ոչ բացարձակապէս կարելի չէ արդի հայերէնի մէջ գերենթակայական իմաստ ստացած բառով մը զբաղիլ: Բայց կը մտածեմ որ եթէ հայ թերթերու խմբագիրներ իրենց թերթերէն ջնջեն «ղեկավար» բառը, ես բարեկամիս կը յիշեցնեմ իր հին առաջարկը: Անպայման կը յիշեցնեմ: «Կարանթի»: Հայ խմբագիրները քիչ մը այլասէր չե՞ն կրնար ըլլալ»:*

*6. Այս նիւթը ողջ ազգը յուզող «փրոթոքոլ»-ն է:*

*Ու ասոնց նման 6 այլ ազգային հարցեր շօշափող խոհագրական գրութիւններով կ՚աւարտի գրքին բովանդակութիւնը:*

*Անտարակոյս, Մ. Հայկենցի «Մինչեւ դրախտը եւ Անդին» գիրքը, իր պատմուածքներուն նիւթերովը, մարդուս այնքան հարազատ եղող անոնց նկարագրային հիմնական գիծերովը, իր ստեղծած կերպարներուն յարաբերական հաւասարակշռութեամբը, հայ գրական լեզուին մակարդակային բարձրութեամբն ու անոր կիրարական բացարձակութեամբը, իր գրչին յատուկ ճորոմաբանութիւններէ հեռու մտքերու յստակ դասաւորութեամբն ու ձեւակերպութեամբը, կարճ նախադասութիւներովը կը դարձնեն գիծը գեղաթով, առինքնող եւ վայելքի աղբիւր մը:*

*Իսկ երկրորդ մասն ալ իր ազգային նիւթերովն ու հարցերովը կը վկայեն Մ. Հայկենցի վերլուծական հասունութիւնը, քաղաքական հայեցողութիւնը, պատմական պրպտող միտքը վերջապէս ազգային մտահոգութիւններով յուզուող գաղափարապաշտ գրողը:*

*Այս առթիւ անհունօրէն եւ սրտագինս կը շնորհաւորենք Մ. Հայկենցն ու ջերմագինս կը մաղթենք արեւշատ տարիներ եւ քաջառողջ կեանք, իր նոր ստեղծագործութիւններով տակաւ պերճացնելու համար հայ գրականութեան անդաստանը:*

*Գիրքը ստանալու համար 25 տոլարի չէքով դիմել Mayreni Publishing-ին, P. O. Box 58815 Montery CA 93944 USA:*

# ARMENIAN INDEPENDENCE DAY
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ

# FESTIVAL
# Փառատօն

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

**SUNDAY SEPTEMBER 18, 2011**
**VERDUGO PARK, GLENDALE**

Live Music
Dancing
Art Work Exibition
Kids Games
Armenian Food

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

To reserve your booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
**(818) 391-7938**